




## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

338.98

4-82

Վ. ԿՈՍՏԵՆԿՆՈՎ.

ՀԵԳԵԼՍՅԱԿԻ ԶՈՐԲՈՐԴ  
ՏԱՐՎԱ ՇԵՄՔԻՆ

17 JAN 2010

338.98

4-82

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԶՈՐՐՈՐԴ  
Տ Ա Ր Վ Ա Շ Ե Մ Ք Ի Ն

1607  
30081

ԽՍՀՄ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԼԱՆԱՑԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Վ. ԿՈՒՅԵԻՇԵՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՐԵԿՈՄԻ 2-ՐԴ ՍԵՍԻՍՅՈՒՄ



1932

ՅԵՐԵՎԱՆ



Պետերատի տպարան  
Գլավլիտ 7078 (բ)  
Հրատարակ. 2030  
Պատվեր 280  
Տիրաժ 5000

Թարգ. Հ. ԼԵՎՈՆՅԱՆ

Հանձնված է տպագրութեան 20 հունվարի 1932 թ. Ս. Ֆ. Ե.

Տպագրված է 16/11.

## ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ—ՅԵՐԿՈՒ ՍԻՍՏԵՄ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի ներկա սեանքի անդամ և քննարկի և հաստատի հնգամյակն ավարտող տարվա ժողովրդաստեղծական պլանը:

Մենք ժողովրդական տնտեսութեան ծավալման վիթխարի ծրագիր ենք նշում այն ժամանակ, յերբ ամբողջ աշխարհում մոլեգնում և մեծագույն ճգնաժամը և վողջ կապիտալիստական սխտեմն ապրում և իլուզման չբժանում:

Հակառակ բուրժուական տնտեսագետների և սոցիալ-դեմոկրատների կանխագուշակութուններին, ճգնաժամն ավելի ու ավելի աճում և, քարուքանդ անելով արտադրողական ուժերը և անհարմար արհավիրքներ բերելով բանվոր դասակարգին:

Արդյունաբերական արտադրանքի արտադրութունը կապիտալիստական յերկրներում 1931 թ. կրճատվեց 1929 թ. համեմատութեամբ ընդհանուր առմամբ ավելի քան մեկ քառորդով: Մի շարք յերկրներում այդ կրճատումն ավելի մեծ է: Այսպես որինակ—Լեհաստանում՝ 28 տոկոսով, Ավստրիայում՝ 31 տոկոսով և այլն: Հիմնական ճյուղերի, որինակ՝ թուղի արտադրանքը ՈՍՀՄ-ում 1931 թ. վերջին կրճատվեց 1929 թ. համեմատութեամբ ավելի քան 2 անգամով:

Աճում և գործադրկութունը, հասնելով կապիտալիզմի պատմութեան մեջ ամենեին չտեսնված չափերի: Հիմնական յերկրներում լիակատար ու մասնակի գործադրկութեամբ ընդգրկված է բանվոր դասակարգի կե-



«ից ավելին: Հիմնական կապիտալի սպառազորումը հասել է բացառիկ ցածր թվերի: ՀԱՄՆ-ում, Անգլիա-յում, Գերմանիայում դոմենյան վառարանների մեկ յերրորդից մինչև մեկ չորրորդ մասը հանդած է: Անգլիայում պողպատաձուլական արդյունաբերության կարողության  $\frac{1}{10}$  մասն է միայն սպառվում, Գերմանիայում՝ կեսից ել պակաս: Հիմնական կապիտալիստական յերկրներում արծախաճեքերի կարողությունն սպառվում է ընդամենը կիսով չափ: ՀԱՄՆ-ի ավտոարդյունաբերության մեջ, արդյունաբերության այդ ամենակարևոր և ամենալավ կազմակերպված ճյուղերից մեկում, բեռնավորումը կազմում է միայն 20 տոկոս:

Գների բարձրացման նպատակով կապիտալիստական տրեստները վոլնչացնում են հսկայական քանակությամբ ապրանքներ: Բարձր գների յետևից ընկած՝ ցորենը և յեղիպտացորենը վառում են չորեմեքենաների հնոցներում, սուրճը ծովն են լցնում, կաթը թափում են գետը, պտուղները թողնում են ծառերի վրա փտելու:

Կապիտալիզմն, այնուհետև արտադրված ապրանքի փչացումից անցել է արտադրողական ուժերի փչացմանը— կտրտում են սրճի պլանտացիաները, լքում են ցանքատարածությունները և այլն և այլն: Յեկ առաջին հերթին Ֆիզիքապես վոլնչացնում են կաբեռապոլյե արտադրողական ուժը— բանվոր դասակարգին: Աշխատավարձի կրճատումը, նպատակների կրճատումը, բնակարանային կարիքը, խրոնիկական դործադրկությունը հանգում են բանվոր դասակարգի ալյատերման այդ բառի բուն նշանակությանը:

Շարունակ խորացող ճգնաժամը գնալով ավելի ու ավելի յե մոլորվածության և թերահավատության դրացմունք սերմանում կապիտալիստական սիստեմի նկատմամբ: Կապիտալիստական կառուցվածքն արգեն ամենևին չի պատկերացվում վորպես միակ ճիշտ և «բնական» հասարակարգ: Ճգնաժամը վերջ տվեց

այդ հայացքին և ամբողջ աշխարհին ցույց տվեց կապիտալիստական սիստեմի ելույթյունը նրա ամբողջ տգեղությունը, նրա բոլոր ներքին հակասություններով, ցույց տվեց նրա ամբողջ անողնականությունը, տարերայնությունը, անպանայնությունը:

Այս տեսակետից չափազանց ընդուն է վերջերս Բերնարդ Շոույի հետ մեր Միությունն յեկած յորդ Լոտիենի հոդվածը:

Անգլիական յրերալ որդան «Կոնտեմպորերի րեվյու» ժուրնալի սեմպետերյան համարում նա գրում է— «Խոստովանում եմ, Մարքսի և Լենինի մարդարելությունները ժամանակակից արեմտյան հասարակության անխուսափելի զարգացման մասին յրագործվում են ամենամանր յրթարական ճշգրտությամբ... Մի բանի տարի առաջ մոդա յեր համարվում համաշխարհային պատերաղմում դաշնակիցների հաղթանակը դիտել վորպես աստծո արքայության նախադուռ յերկրի վրա: Իսկ այժմ ընդունված է հարցնել— արդյո՞ք մենք ակնատես չենք քաղաքակրթության մայրամուտին»:

Լոտիենը յելք է վորոնում կապիտալիզմի «ուղղման» մեջ: Նա, իհարկե, դեմ է հեղափոդության, դեմ է մասնավոր սեկականության վերացման, դեմ է պրոլետարիատի դեկտատուրային, նա կողմնակից է կապիտալիզմի «բարելավման»: Կարիք չկա ապացուցել, վոր կապիտալիստական կառուցվածքը «բարելավելու», «պլանավորելու» և «ուղղելու» այս բոլոր փորձերը դատապարտված են անխուսափելի ձախողության:

Ի՞նչ է տեղի ունենում մեզ մոտ: Հնդամյա պլանի յրագործման յերեք տարիները վերջանալու վրա յեն:

Հնդամյակի հսկայական միջադգային նշանակությունն անլիճելի յե:

Կապիտալիստական աշխարհի կողմից ատելությամբ, չարությամբ և թերահավատությամբ դիմավորված հնդամյակը միաժամանակ մարմնացնում էր միջադգային բանվոր դասակարգի լավագույն հույսերը:



Ինչպես մեր բոլոր պլանները, հնգամյակը եւ հանգիստնում եւ իբրեւ դասակարգային պայքարի տղան, կապիտալիզմի դեմ սոցիալիստական հարձակում ծավալելու պլան: Հենց այդ եր պատճառը, վոր հնգամյակը դեռեւս կազմութեան չընտնում համեմատուր քաղաքական պայքարի առարկայ դարձավ: Հենց այդ ե պատճառը, վոր հնգամյակի իրադրծումն անխուսափելիորեն կապված ե ուրորտունիստական տարրերի կողմից նրա դեմ մղվող պայքարին:

Ինչպես ե կատարվում հնգամյակը: Դասակարգային ուժերի փոխհարաբերութեան տեսակետից հնգամյա պլանի կատարման խնդրում վճռական ու կարեւորագույն գործոն ե հանդիսանում սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտումը 1931 թ. ե սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռութեանը մեր յերկրում:

Գյուղացիական տնտեսութեաններն ավելի քան 66 տոկոսի կոլեկտիւացումը սոցիալիստական արդյունաբերութեան վիթխարի աճման հետ միասին վճռում ե սոցիալիզմի հաղթանակի հարցը մեր յերկրում:

Հնգամյակն սկսելով այնպիսի պայմաններում, յերբ գյուղատնտեսութեան մեջ գերակշռող նշանակութեան ունեյին մանր սեփականատիրական, մանրացրիւ գյուղացիական տնտեսութեանները կապիտալիստական կուլակային տարրերի վորոշ խավի առկայութեամբ, մենք հնգամյա պլանն ավարտում ենք այնպիսի տղամաններում, յերբ հիմնականում ավարտված ե համառարած կոլեկտիւացումը ե այդ հիման վրա վճռականորեն ջախջախվում ե կուլակութեանը վորդես դասակարգ:

Իրականութեան մեջ 1928 թ. կոլտնտեսութեանները միավորում եյին գյուղացիական տնտեսութեանների ընդամենը 1,7 տոկոսը: 1929 թ. կոլտնտեսութեան մտած տնտեսութեանների տոկոսը հասավ 3.9-ի: Մեծ բեկման տարին կոլտնտեսութեանը բերեց միջակներն մի լայն ալիք — 1930 թ. կոլեկտիւացած դյուղա-

ցիական տնտեսութեանների տոկոսն արդեն կազմում ե 23,6: 1931 թ. չքալոր-միջակային դյուղի ճեղղ մասը կոլտնտեսութեան մտնելով, այդ տոկոսը բարցրացրեց 62.2-ի: 1928 թ. կոլտնտեսութեաններն ընկնում եր գյուղացիական ցանքատարածութեանների ընդամենը 2 տոկոսը: 1931 թ. կոլտնտեսութեանները միավորում են արդեն գյուղացիական ցանքատարածութեանների 79 տոկոսը, յեթե հաշվելու լինենք 1931 թ. աշնանավար ցելի հետ միասին:

Սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռութեանը յերկրում հանգեց ժողովրդական յեկամտի բաւորովին նոր մի կառուցվածքի: Հանրայնացված սեկտորի մասը 1931 թ. ժողովրդական յեկամտի մեջ հասավ 81,5%-ի: Սոցիալիստական տարրերի աճման այս փաստերի մեջ ե հնգամյակի յերեք տարիների գլխավոր հանրադրումը:

Սոցիալիզմի առաջխաղացման բնագավառում այս չափեցուցիչ արդյունքները մենք ձեռք բերինք ամենից առաջ նրա համար, վոր ամբողջ բայլչեիկյան հաստատակամութեամբ ե համառութեամբ զարկ տվինք ծանր արդյունաբերութեան, սոցիալիզմի այդ հիմունքի դարգացմանը:

Արդյունաբերական արտադրութեան բնագավառում մենք անցած յերեք տարվա ընթացքում ունեցանք արտադրանքի տարեկան աճում 21-ից մինչե 24 %, վոր նշանակում ե հնգամյակի գերակատարում յերրորդ տարում 13 %-ով: Սակայն ծանր արդյունաբերութեանը քստ այդմ աճեց զգալիորեն ավելի արագ տեմպերով, տալով 24-ից մինչե 40 % տարեկան աճում:

Արդյունաբերական արտադրանքի այդպիսի աճումը ներկայումս անիմաստ ե վորեւե կապիտալիստական յերկրում ե ռեկորդային ե հանդիսանում համաշխարհային արդյունաբերութեան պատմութեան մեջ:

Արտադրութեան ծավալման դժով առաջից են գնում նալքը ե արդյունաբերութեան մեքենայինարարական ճյուղերը՝ բնորոշելով վողջ ժողովրդական տքն-



տեսութեան տեխնիկական վերագլմման վիթխարի սր-  
ցեսը: Արդեն կատարել է իր հնգամյակը ելեկտրոտեխ-  
նիկումն և գերակատարել են արդյունաբերութեան մե-  
քենաշինարարական ճյուղերն ամբողջապէս վերցրած:

Ներկա 1931 թ. հնգամյակը գերակատարում է  
տրակտորի արդյունաբերութեանը: Թի ինչ-վոր 2-3  
տարում ամբողջապէս նոր ստեղծված խորհրդային  
տրակտորաշինութեանը ներկայումս համաշխարհային  
արդյունաբերութեան ամենից ավելի առաջավոր ճյու-  
ղերից մեկն է հանդիսանում, տալով արդեն իսկ ընթա-  
ցիկ տարում մոտ 557 հազար ձիու ուժ (հնգամյակը  
նախատեսում էր 1932-33 թ. համար 550 հազար ձիու  
ուժ): Հնգամյակում գերազանցող տեմպերով զարգա-  
նում է գյուղատնտեսական մեքենաշինարարութեանը:

Հնգամյակի համապատասխան տարվա նախագծու-  
մը գերակատարում է քարածխի արդյունաբերութեան-  
ը:

Գյուղատնտեսութեան ասպարիզում կոլեկտիվաց-  
ման վճռական հաջողութեաններին ուղեկցում է ցանք-  
սատարածութեանների զգալի աճումը:

Ընդհանրապէս վերցրած 3 տարվա ընթացքում  
մենք ունենք ցանքսատարածութեան աճում 37,7 տոկո-  
սով, 1931 թ. ձեռք բերելով 137,5 միլ. հեկտար տա-  
րածութեան, վոր նշանակում է հնգամյակի համապա-  
տասխան տարվա նախագծման գերակատարում:

Ցերկաքուղային տրանսպորտի բեռնաշրջանառու-  
թեանը զգալիորեն գերազանցել է հնգամյակի նշում-  
ները:

Արդեն իսկ 1931 թ. յերկաթուղային տրանսպորտի  
բեռնաշրջանառութեանը հասավ 250 միլիոն տոննի,  
մինչդեռ այդ տարվա համար հնգամյայա պլանով նըշ-  
վում էր ընդամենը 210 միլ. տոնն:

Աշխատանքի բնագավառում բանվորների թվի  
գծով մենք ունենք հնգամյակի նախագծումների զգալի  
գերազանցում:

Ընդ վորում չի կարելի չնշել այն փաստը, վոր ին-

գուստրացման և գյուղի սոցիալական դեմքի ալ-  
մասական փոփոխութեան արագ տեմպերի հետևանքով  
ԽՍՀՄ-ում արդեն իսկ հնգամյակի յերրորդ տարում  
ամբողջապէս վերացված է դործազրկութեանը:

Հնգամյակի կատարման ընթացքը հանգեց արտա-  
դրութեան վիթխարի ծավալմանն արդյունաբերութեան  
հիմնական ճյուղերում:

Ինչը պայմանավորեց պլանի կատարման այս ա-  
րագացումը: Ամենից առաջ, բանվոր դասակարգի խան-  
դավառութեանը, մեր սոցիալիստական պլանային սիս-  
տեմի առավելութեաններն ու ռեզերվները, վորոնք  
առանձին ուժգնութեամբ յերևան յեկան պլանի կատար-  
ման ընթացքում և դրանով իսկ հնարավորութեան  
այլին զգալիորեն ավելի արագ ու ավելի լրիվ կատարել  
ինգամյա պլանով դրված խնդիրները:

Հենց պլանների այդ գերակատարման եր կոչ ա-  
նում մեզ կուսակցութեան ԿԿ-ը, վոր մի շարք վորո-  
շումներով ընդգծում էր նոր խնդիրներ և բաց անում  
արագացման նոր աղբյուրներ:

Այստե-տրակտորային պարկի աճումը և արտահան-  
ման պահանջները մեզ ստիպեցին արագացնել նավթ-  
արդյունաբերութեան զարգացումը, և այդ ճյուղն իր  
հնգամյակը գերակատարեց արդեն իսկ 1931 թ.:

Կենտրոնական Կոմիտեն վճռական ճյուղերի— մե-  
տալուրդիայի և ամխի—դծով տվել է նոր, մեծացրած  
առաջադրութեաններ:

Մենք զարկ ենք տալիս մեր տրակտորաշինարարու-  
թեանը, ելեկտրոտեխնիկային, մի շարք այլ ճյուղերի:

Վերջերս ԿԿ-ի պլենումը արմատապէս զրեց յերկա-  
թուղային տրանսպորտն ելեկտրիֆիկացիայի հիման  
վրա վերակառուցելու հարցը, նոր մեծ խնդիրներ են  
նշված քաղաքային տնտեսութեան վերակառուցման  
բնագավառում, սոցիալիստական անտանտապահութեան  
յարգացման բնագավառում և այլն: Կատարելով և դե-  
րակատարելով հնգամյակը, մենք ստեղծում ենք նոր  
արդյունաբերական կենտրոններ, հսկայական մասը—



տարներով իրազործում ենք կուսակցության վորդա-  
մբ յերկրորդ անգամ-մեծապարգիական բազա ստեղծե-  
լու վերաբերյալ:

Ժողովրդական տնտեսության պահանջներին աճու-  
մբն ամենակարճ ժամանակամիջոցում կապիտալիզմա-  
կան յերկրներին նկատմամբ տնտեսական անկախություն  
ձեռք բերելու անհրաժեշտությունը, կոլեկտիվացման  
տեխնիկական բազան և աշխատանքի տեխնիկական վե-  
րադիմումն ապահովելու անհրաժեշտությունը, — այս  
բոլորը պայմանավորեցին չարժան արագացումը:

### 1931 թ. տնտեսական արդյունքները

Հնգամյակի կարևորագույն արդյունքն են հանդի-  
սանում այն հաջողությունները, վոր ձեռք են բերել  
բանվոր դասակարգի բազմամիլիոն մասսաները Խեյ-  
նիկայի տիրապետման համար մղվող պայքարում: Ընդ-  
Ստալինի յերուշթը տնտեսավարների կոնֆերանսում  
բանվորական մասսաների, տնտեսավարների և ինժեներ-  
ո-տեխնիկական աշխատողների լայն խավերի ամենա-  
խոր բեկման սկիզբ հանդիսացավ:

Տեխնիկական վերակառուցման բոլոր հարցերում  
կուսակցությանը ղեկավարում և տեխնիկական ա-  
ռաջադիմության ուղղությունը, արտադրողական ու-  
ժերի շինարարությունը նոր նյութական հիման վրա,  
վորը համապատասխանում և արտադրության սոցիա-  
լիստական յեղանակին: Գնալով ավելի վիթխարի ծա-  
վալ և ստանում տեխնիկական պրոպագանդը և բանվո-  
րական լայն մասսաների տեխնիկական ուսուցումը:  
Գնալով ավելի յե՞ բարձրանում բանվորական գյուղատ-  
րարության ուսցիտնալիզատորական առաջարկներին,  
ովյալ արտադրության տեխնիկայի բարելավման գոր-  
ծում յուրաքանչյուր բանվորի անմիջական մասնակի-  
ցության ալիքը: Մի շարք ձեռնարկություններ և հե-  
տադետական ինստիտուտներ, ինչպես և գիտական-  
տեխնիկական ընկերություններ պայքար են սկսել տեխ-

նիկական պլանի համար, յուրաքանչյուր ձեռնարկու-  
թյան, տրեստի ու միավորման արդիֆինպլանում տեխ-  
նիկական վերակառուցման հիմնական ցուցանիշները,  
սարքավորումների լավագույն յուրացման միջոցա-  
ռումները, գյուղատրարության և այլ պլանները մտքը-  
նելու համար:

Հնգամյակի յերեք տարիներին հետևանքով մենք  
հասել ենք ժողովրդական տնտեսության տեխնիկական  
վերադիմման բավական բարձր աստիճանին:

Հնգամյակի արդյունքները նշում են վիթխարի հա-  
ջողություններ Յևրոպայի և ՀԱՄՆ-ի առաջավոր  
տեխնիկայի լավագույն նմուշների յուրացման նոր ար-  
տադրությունների զարգացման գիտության և նրա  
տեխնիկական կիրառումների զարգացման, մասսայա-  
կան արտադրության պրոցեսների յարացման գործում:  
Մյս հիման վրա ձեռք են բերված մի շարք վճռական  
տեղաշարժեր ԽՍՀՄ-ն ուտարելիքա կախումից ազա-  
տագրելու գործում:

Առանձնապես պետք է ընդգծել ԽՍՀՄ-ում նոր տի-  
պի մեքենաների և սարքավորումների արտադրության  
գործում ձեռք բերված հաջողությունները: Այդ շար-  
քին և վերաբերում, առաջին հերթին, եներգետիկ սար-  
քավորման բարդ ունեցների արտադրության տիրապե-  
տումը, ինչպիսիք են՝ 50.000 կրկ. կարողության տիրապե-  
տումը (Ստալինի անվան գործարանում), 12.000  
կրկ. կարողության տեպլոֆիկացիոն սուերրիններ, 1500  
քառ. մետր ջնուցման մակերեփի նորմա ունեցող կաթ-  
սաներ, ուժեղ հիդրոտուերրիններ և նրանց բարդ ավտո-  
մատիկ ռեգուլյատորներ, թեթևացրած տիպի նորմալ  
մոտորներ, բարձր-վոլտաժին մեկուսիչներ (115 հազար  
կիրվապանոց), բարձր-վոլտաժին յուղային անջատիչ-  
ներ, սնդիկային ուղղիչներ, բարձր հաճախականու-  
թյան մեքենաներ, մետաղների հալման ինդուկցիոն  
փոսարաններ, բարձր-վոլտաժին սարքատներ, մի  
շարք կոնստրուկտիվ սարքեր, բլյումինդների բարդ  
էլեկտրոսարքավորումներ, վալ տիպի մոտորներ հան-



քերի համար, ավտո-տրակտորային ելեկտրոսարքավորումներ, ելեկտրո-դողման սարքավորումներ և այլն :

Մետալուրգիայի բնագավառում, խոշորագույն դոմինյան վառարանների, մարտենների և մամլող դաղգյահների շինարարութանը զուգընթաց, անհրաժեշտ է նշել բարձրորակ պողպատների արտադրութան տիրապետումը Ձելյարինսկի գործարանում և «Ելեկտրոստալ»-ում, ելեկտրական պողպատինը՝ մի շարք ձեռնարկութուններում, փափուկ թուջինը՝ Լյուբերեց գործարանում և Ստալինգրադի ու Սարկովի տրակտորի գործարաններում, վերջապես, աշխարհումս տասներեքերորդը հանդիսացող առաջին խորհրդային Բլյու-մինգի և խորհրդային կաղապարող մեքենաների կառուցումը :

Մանրածեղտ և նշել նաև մի շարք արժեքավոր գիտա-հետազոտական աշխատանքները, վորոնք լուծում են դիդաղոմադնելիտների կոմպլեքսային ոգտագործման, Ստալինյան հանքանյութից նիկել և կերչի հանքանյութից վանադիում ստանալու պրոբլեմը :

Մեքենաշինարարութան բնագավառում անհրաժեշտ է նշել ավտո-տրակտորային արդյունաբերութան լայն ծավալումը :

Հսկայական նշանակություն ունի նաև կոմբայնի արտադրութան կազմակերպումը և բերքահավաքի այդ կարևորագույն մեքենայի նոր, խորհրդային տիպերի մշակումը (առանց մոտորի կոմբայն և այլն) :

Տրակտորին և կոմբայնին զուգընթաց մեր արդյունաբերութունն այս տարի սկսել է արտադրել 70 նոր տիպի դյուղատնտեսական մեքենաներ, գլխավորապես տրակտորային կցորդ սարքավորումներ հացահատիկային մշակույթների համար, ինչպես նաև մշակված են մի շարք մեքենաներ տեխնիկական մշակույթների բերքահավաքի համար (վուշ զգող մեքենա, բամբակահավաք մեքենա, ճակնդեղի կոմբայն և այլն) :

Ընդհանուր մեքենաշինարարութան առաքարիզում մենք ձեռք ենք բերել մի շարք հաջողություններ մետա-

ղամշակման դաղգյահների, ողահանների և կոմպրեսորների, շինարարութան մեքենայացման սարքավորումների, ելեկավատորների, տեքստիլ մեքենաների, սննդի արդյունաբերութան և այլ սարքավորումների արտադրութան յուրացման գործում :

Հնգամյակի 3 տարիների ընթացքում մենք գործի յենք դրել հսկայական քանակությամբ նոր գործարաններ : Մենք ստեղծել ենք մի շարք ուժեղ ելեկտրոկայաններ— ալյուրի ելեկտրական հանգույցներ, ինչպիսիք են Ետերովյան կայանը, Չուլսկի կայանը, Դոն-բասում, Չելյաբինսկի հիդրոկայանը, Կիդելովյան կայանը, Վոլխովյան կայանը, վերակառուցված և կաշխարհագրորդ, Լենինգրադի 2-րդ հիդրոկայանը և մի շարք այլ կայաններ :

Հնգամյակի կենտրոնական ողակներից մեկի— Դնեպրոստրոյի շինարարութունը հաջողությամբ ավարտվում և պատրաստվում է առաջին հոտանքը լաց թողնել 1932 թ. մայիսին :

Գուհավոր մետալուրգիան, վոր մինչև այժմ համարվում էր մեր ժողովրդական տնտեսութան ամենանեկ բնագավառը, գործի յե դրել Կոնստանտինովսկու և Բելովսկու ցինկի գործարանները, Պիշմինյան կոմբինատի, Կարսակոպյի գործարանի, Կալապայի, Կարաշի առաջին սեկցիաները : Մենք ունենք արդեն առաջին խորհրդային այլումներ և ուժգին տեմպով կառուցում ենք գործարաններ, վորոնք մեկ կադատեն տարերիքայ կախումից գունավոր մետաղների դժով :

Վառելանյութի բնագավառում—12 նոր ուժեղ քարածխահանքեր, վորոնցից վումանք ունեն մոտ մեկ և կես միլիոն տոննի կարողություն, մի շարք նոր կրեկինդներ և տրուբչատկաներ նավթարդյունաբերութան մեջ, նոր նավթամուղեր և նավթի վերամշակման գործարաններ են շահագործման դրված և աճուխ, նավթ, բենզին են տալիս խորհրդային յերկրի հնոցներին, չոգեմեքենաներին, տրակտորներին, մոտորներին :



Հաշված որեր են մնացել Ն. Նովոգորոդի ավտոմո-  
բիլի գործարանի գործարկմանը: Աշխատանքի յեն  
անցկացված Ռոստովի գյուղատնտեսական մեքենանե-  
րի գործարանը, Տորենկի գործարանը, Ոմսկի գործա-  
րանը: Գործարկման նախորդակին են գտնվում Սարա-  
տովի կոմբայնի գործարանը և գյուղատնտեսական մե-  
քենաշինության մի շարք այլ գործարաններ:

Բարձրացել են աշխարհի գեղատեսիլ, ինչպիսիք են՝  
«Ելեկտրոդավորը» Մոսկվայում, Պարկովի ելեկտրո-  
մեխանիկական գործարանը, «Ելեկտրոստալը», Սար-  
տովի չողմեքենաների գործարանը՝ ուժեղ վերակա-  
ռուցման յենթարկված, Բրյանսկի «Պրոֆինտերն»-ի  
վերակառուցումը, Սորմովոյի, Կոլոմնայի, Պոդոլսկու  
նոր ցեխերը, Լենինգրադի և Մոսկվայի կենտրոնական  
ձուլարանները, նոր վերակառուցման են յենթարկված  
գյուղատնտեսական մեքենաշինարարության, ելեկտրո-  
արդյունաբերության և քնդհանուր ու հատուկ մեքե-  
նաշինարարության գործարանները:

Մենք դարձ ենք տալիս Ուրալմաշտրոյի, Ստալ-  
մաշտրոյի, Լուգանսկի չողմեքենաների գործարանի  
և մի շարք այլ գործարանների կառուցմանը, վորոնք  
բազա կապահովեն մեր մետալուրգիայի և ածխարդյու-  
նաբերության զարգացման համար:

Բիմիական արդյունաբերությանը նույնպես գոր-  
ծի յե դրել մի ամբողջ շարք նոր ձեռնարկությաններ,  
մի ամբողջ շարք ծծմբաթթվուտային սարքավորում-  
ներ, գործարկված են կալիի հանքերը, Փոսֆորիտի  
հանքերը, Վոսկրեսենսկի սուպերոսֆատի գործարա-  
նը, Սեբեյի սլաքարտանյութերի գործարանը, Ռու-  
բեժանսկի, Դորոգոմիլովի և Չերնորեչենսկի գործա-  
րանները նոր ցեխերը:

Շինանյութերի արդյունաբերության բնագավա-  
ռում աշխատանքի յեն անցկացված մի ամբողջ շարք  
նոր գործարաններ—5 դեմենտի գործարան, 3 սոլակու  
գործարան, 10-ից ավելի սոցցարտաներ, 4 թղթի գոր-

ծարան և մի ամբողջ յերկար շարք աղյուսի, կբի, նոր  
շինանյութերի գործարաններ:

Թեթև արդյունաբերության բնագավառում մենք  
նույնպես մեծ շինարարության ենք ծավալել: Տեքստիլ  
արդյունաբերության գծով շինված են «Կրասնայա  
Տուլկա», «Կրասնիյ Տկաչ», «Կրասնոյե Զնամյա» գոր-  
ծարանները, Լենինգրադի մանվածքային գործարանը,  
Ֆերգանի բամբակեղենի գործարանը, Աշխաբատի բամ-  
բակեղենի գործարանը, Կրեմենչուգի և Թիֆլիսի մա-  
հուլի գործարանները, Մելանի կոմբինատը Իվանո-  
վո-Վոդնեսենսկու մոտ, Վիտեբսկի տրիկոտաժի գոր-  
ծարանը և այլն:

Մենք սկսել ենք ստեղծել անդադրմական ուժեղ  
արդյունաբերություն: Արդեն կառուցված են մի շարք  
մասկոմբինատներ, կոնսերվի ուժեղ գործարաններ,  
ոսլա-շարալի գործարաններ, շաքարի ուժեղ գործա-  
րաններ, աշխարհի, ինչպիսիք են Լոխվեցկի, Նովո-  
սելեցկի գործարանները, ավարտվում են Կերգելայի  
և Միբրի գործարանները:

Այս նոր կայանների, այս նոր գործարանների, նոր  
հանքերի, նոր աղբեղատների թվարկումը քիչ էջեր չի  
ունում: Դա մեր հաղթանակների թվարկումն է, մեր  
յերկրի ինդուստրացման բայլելիկյան տեմպերի հաջո-  
ղությանների կոնկրետ ցուցանիշն է:

Այս 3 տարվա ընթացքում մենք հսկայական նոր  
հիմնական կապիտալ ենք ստեղծել: 1929 թ. արդյու-  
նաբերության մեջ մենք դրել ենք մոտ 1400 միլիոն ու-  
նոր հիմնական կապիտալ, 1930 թ.՝ մոտ 2 միլիարդ  
ու. և 1931 թ. մոտ 3,5 միլիարդ ու.: Այսպիսով 3 տար-  
վա ընթացքում մենք ներդրել ենք 7 միլիարդ ուղբու-  
հիմնական կապիտալ: Այդ դրեթե կրկնապատկին է այն  
դումարի, վոր մենք ունեյինք հնդամյակի սկզբին:

Մենք վոչ միայն ստեղծել ենք նոր գործարաններ,  
այլև ստեղծում ենք արդյունաբերության աշխարհի նոր  
ճյուղեր, վորոնք անձանոթ եյին նախահեղափոխական



Ռուսաստանին, այնպիսի ճյուղեր, ինչպես արհեստա-  
կան բուրգը, սինտետիկ կաուչուկը, վորի արտադրման  
մեթոդներն արդեն գտնված են, սլաստիկ զանգված-  
ները, էլեկտրոտեխնիկայի մի շարք ճյուղեր, ալյու-  
մին, կալի, ճիշտ ինդուստրիայի մի շարք ճյուղեր  
(ժամացույցների, ճիշտ ամիս-սարքերի մասնաշա-  
կան արտադրություն) և այլն: Մենք հնարավորություն  
ունենք մեր սեփական մեքենաշինարարությամբ ապա-  
հովել, արդյունաբերության այնպիսի ճյուղեր, ինչ-  
պիսիք են՝ տեքստիլ, կոշիկեղենի, սննդադորմական  
արդյունաբերությունը:

Այնուամենայնիվ, չնայած բոլորի համար այս բա-  
ցահայտ հաջողություններին, մեր թշնամիներն ամեն  
կերպ աշխատում են նսեմացնել խորհրդային Միության  
հաղթանակների նշանակությունը:

Վերջերս բերդվարդիական «Советские Новости»  
թերթում տպագրված էր ոռուական վոչ-անհայտ կա-  
պիտալիստ Ռյարուչինսկու նամակը: Ահա թե նա ինչ  
է գրում.

«Վոդորմած տեր, պարոն խմբագիր, վերջին նվա-  
ճումների թվում բայլչեկները հայտարարում են Մոս-  
կվայում «ԱՄՈ» ավտոմոբիլի նոր գործարանի բացման  
մասին: Այդ բացումը նրանք կազմակերպում են մեծ  
աղմուկով:

Հիմարությունը վերականգնելու համար, թեր-  
թիդ իրազեկ եմ դարձնում, վոր «ԱՄՈ» (АВТОМО-  
БИЛЬНОЕ Московское Общество) ավտոմոբիլի գոր-  
ծարանը կառուցվել է 1916-1917 թ. թ. մի խումբ մոս-  
կովիչների միջոցով, սարքավորվել է ամերիկական մե-  
քենաներով, ստացել է «Ֆիատ» տիպի 3000 բնոնատար  
ու թեթև մարդատար ավտոմոբիլների համար անհրա-  
ժեշտ նյութեր:

Հրավիրվեց լափադույն տեխնիկական անձնակազմ  
և ձեռնարկվեց սկսել ավտոմոբիլները պատրաստման  
աշխատանքը:

1917 թ. վերջերին Հոկտեմբերյան հեղափոխու-  
թյամբ գաղարեցվեց գործարանի գործունեությունը:

Այժմ, իրենց տիրապետության 14 տարիներից հե-  
տո, բայլչեկները պատրաստվել են վերականգնել աշ-  
խատանքը մի գործարանում, վոր իրենք չեն կառուցել  
և սարքավորել: Յեւ այդ նրանք կոչում են իրենց նոր  
նվաճումը:

Խորին հարգանք՝


Սերգեյ Ռյարուչինսկի:

Բանից դուրս է գալիս, վոր «ԱՄՈ» գործարանը,  
վորի կառուցումը մենք նորերս վերջացրինք և վորը  
կառուցվեց ամբողջ Մոսկվայի աչքի ստաշ, բայլչեկե-  
րների հերյուրանք և, վոր բոլոր նոր ցեխերը—նոր ձու-  
լարանը, նոր դարձնոցը, հավաքման ցեխը և այլն—  
վաղուց արդեն «կառուցված» են յեղել պարոն Ռյա-  
րուչինսկու միջոցով: Պարոն Ռյարուչինսկին բացա-  
հայտորեն կաշվեց դուրս է գալիս: 1917 թ. գործարա-  
նը ընդհանրապես պատրաստ չէր ավտոմոբիլի ար-  
տադրություն սկսելու համար: Այսպիսով, հին գոր-  
ծարանը ևս փաստորեն պարոն Ռյարուչինսկին չի չի-  
նել: Այժմ Ռյարուչինսկին ճգնում է գործն այնպես  
պատկերացնել, վոր իբրև թե նոր գործարանն էլ նրա  
ձեռքի աշխատանքն է:

Գործարանը հարկ յեղածին պես սկսեց աշխատել  
այն ժամանակ միայն, յերբ բանվոր դասակարգը գոր-  
ծարանն իր ձեռքը վերցրեց: Բայց դե խոսքը հիմա  
հին ԱՄՈ-ի մասին չե, վոր այնքան անհայտ կերպով  
կառուցեց Ռյարուչինսկին և վորը 1930-31 թ. արդեն  
բաց թողեց 3000 մեքենա: Խոսքը նոր գործարանի մա-  
սին է, վորն ստեղծեց խորհրդային իշխանությունը,  
վորը կառուցեց բանվոր դասակարգը: Գործարանը մեկ  
հերթի աշխատանքով արտադրելու յե տարեկան 25.000  
ավտոմեքենա, և նա որեցոր անընդհատ ավելացնում է  
այդ ավտոմոբիլների արտադրությունը:

Հնգամյա պլանի համաձայն, հանրագումարը տա-

1007  
30081





լով, յետ անիսկված եմ ընդդէմ վորակական ցուցանիշներին պլաններին կատարման հետամնացութիւնը ինչպէս աշխատանքի արտադրողականութեան, այնպէս եւ ինքնարժեքի իջեցման դժուր։ Մենք չենք կատարում այն, ինչ նշված եր հնգամյա պլանով նաև շինարարութեան արժեքի դժուր։ Այսպէս, աշխատանքի արտադրողականութիւնը 3 տարում ավելացավ 34 տոկոսով՝ հնգամյակով հինգ տարվա համար նախագծված 110 տոկոսի դիմաց։

Արդյունաբերութեան արտադրանքի ինքնարժեքը 1927-28 թ. իջավ 4,2%-ով հնգամյակով նշված 7%-ի դիմաց, 1929-30 թ.՝ 6,3%-ով 7,4%-ի դիմաց. 1931 թվականը ինքնարժեքի 2 %-ով աճում տվեց, հնգամյակով նշված 7,6% իջեցման դիմաց։

Ի վերջո 3 տարվա ընթացքում մենք ունենք 10,7%-ով իջեցում, իսկ հաշվելով նաև 1932 թ. պլանը, այսինքն՝ 4 տարում, մենք կունենանք ինքնարժեքի իջեցում 16%-ով, հնգամյակով 5 տարվա համար նախագծված 35%-ի դիմաց։

Վորակական ցուցանիշների նույն դրութիւնն է նաև դուրդատնտեսութեան և տրանսպորտի բնագավառում։ Վորակական ցուցանիշների այս թերակատարումը տեղի յե ունենում շնորհիվ այն պայմանի, վոր արտադրութեան մեքենայացման պրոցեսը և աշխատանքի աւտոմատիզացման վերադիմումն ընթանում են ավելի արագ, քան այդ նշված եր հնգամյա պլանով։

Այս հանգամանքները զաւրի են ասելու, վոր աշխատանքի կազմակերպման և կառավարման պրոբլեմը կենտրոնական պրոբլեմ է հանդիսանում։ Մենք ունենք բոլոր նախադրեալները վորակական ցուցանիշների կատարման դործում ավելի բարձր տեմպերձեռք բերելու համար։ Աշխատանքի իսթանման և վարձատրման հարցերը, աշխատավարձի վերակառուցման հարցերը, դիմադրկութեան վերացումը, անտհաշվարկը, կադրերի հարցերը և այլն, —այն բոլոր պայմանները, վորոնց մասին վոչ չատ ժամանակ առաջ խոսում եր ընկ. Ստա-

լինը, ներկայումս մեծագույն նշանակութիւնն են ստանում։

Անհրաժեշտ է կարճ կերպով կանդ առնել 1931 թ. արդյունքները վրա։

1931 թ. արդյունքներն ընդհանրապես վերցրած բնորոշվում են խոշոր նվաճումներով—կապիտալ շինարարութիւնը վողջ ժողովրդական տնտեսութեան մեջ ֆինանսավորման դժուր կազմում եր 16 միլիարդ. 1931 թվին շահագործման են դրվում միայն արդյունաբերութեան դժուր 3½ միլ. ուղբու գումարով որչեկտներ։ Պլանավորվող արդյունաբերութեան արտադրանքը նախորդ տարին գերազանցեց 20-21%-ով։

Վարձու աշխատողների թիվը յերկրում 14,4 միլիոնից հասավ այս տարի 18,5 միլիոնի։

Սակայն, չնայած այս վիթխարի հաջողութիւններին, 1931 թ. պլանային առաջադրութիւնը թերակատարվեց։

Ինչպէս յես արդեն ասացի, պլանի այս թերակատարումը գլխավորապես բացատրվում է վոչ-բաւարար ճիշտ կազմակերպմամբ։ Հենց այդ և պատճառը, վոր մենք ծայր աստիճանի վատ ենք ոգտագործում դոյութիւն ունեցող հիմնական կապիտալը։

Նյութական-տեխնիկական բաղան վատ ոգտագործվեց նաև դուրդատնտեսութեան մեջ։

Մետալուրգիայի բնագավառում սարքավորումների ոգտագործման կոեֆիցենտը նույնպէս վատ ոգտագործվեց, վորը և մետալուրգիայի այս տարվա յետմնալու պատճառներից մեկը հանդիսացավ։

Ընկ. Ստալինի 6 պայմանների իրադործման համար միվող պայքարը, վորը ծավալվեց III յետամսյակում և հատկապէս IV յետամսյակում, արդեն լուրջ արդյունքներ է տվել։

Այդ պայմանների կատարումը առողջացրեց արտադրական աշխատանքը և պայմանավորեց բեկումը պլանի կատարման ընթացքում։ Այն հանգամանքը, վոր կուտակցութիւնը մոտիկից դադրվեց աշխատանքի կազ-



մակերազման և կառավարման հարցերով, աշխատավարձի հարցերով, պայմանավորվեց այն տեղաշարժը, վորը մենք ունեցանք, որինակ, ամխարդեյունաբերութեան մեջ: 1932 թ. պլանը աշխատավարձի բնագումարում մենք այնպես ենք կազմել, վորպեսզի ժողովրդական տնտեսութեան առաջատար ճյուղերի համար, վորը պետք է ամեն գնով առաջ շարժել, ստեղծվեն ավելին նպաստավոր պայմաններ:

Առաջատար նշանակութիւն ունի, այնուհետեւ, արտադրութեան կառավարման վերակառուցումը: Խոշոր և չափազանց կենտրոնացված միավորումները չեն կարող բավականաչափ կոնկրետ դեկաւրութիւն ապահովել ձեռնարկութեան նկատմամբ, վորը հանդիսանում է մեր աշխատանքի հիմնական ողակը, այն ողակը, վորտեղ վճռվում է պլանի համար մղվող պայքարը:

Մեծ քանակութեամբ նոր արտադրութիւնները և նոր ձեռնարկութիւնները, մասնադիտացման աճումը, տեխնոլոգիական պրոցեսների բարդացումը և ձեռնարկութիւնների ներկա ցրվածութիւնը—այդ բոլորը պահանջում են կոնկրետացնել դեկաւրութիւնը: Դեռևս չվերջացած վերակազմութեան հետևանքով 43 ճյուղային միավորումների փոխարեն տարեկազմին մենք ունենք արդեն 80-ից ավելի միավորումներ:

Այս վերակազմութիւնը կստեղծի ավելի արագ առաջխաղացման կազմակերպչական նախադրելիք:

### 1932 թ. պլանի վնասակար ողակներ

Մենք գտնվում ենք 1932 թվականի նախորդակին: Վորոնք են ամենից ավելի բնորոշ դժեւն այն պլանի, վորը ներկայացված է ձեզ ի հաստատութիւն: Այդ պլանի ամենից ավելի կարեւոր գիծն է հանդիսանում կոլեկտիւացումը 1932 թ. հիմնականում ավարտելը: Գյուղացիական տնտեսութիւնների կոլեկտիւացման տոկոսը պետք է կազմի մոտավորապես 72-75: Այդ նը-

շանակում է հիմնականում ավարտել կոլեկտիւացումը, այդ նշանակում է հիմնականում վերացնել կոլեկտիւութիւնը վորպես դասակարգ: Այդ ամենահիմնական գիծն է այն պլանի, վորը մենք ներկայումս ըննում ենք: Դրա հետ միասին պլանը բնորոշվում է արտադրութեան վիթխարի զարգացմամբ և հսկայական շինարարական ծրագրով. անշեղ բարեկաւելով բանվորների և կոլանտեսականների բարեկեցութիւնը:

1932 թ. պլանի յերկրորդ կարեւորագույն գիծն է հանդիսանում հնգամյակի ավարտումը չորս տարում:

Պլանավորվող արդյունաբերութեան, արդյունաբերական արտադրանքի 36%-ով աճումը նշանակում է 1932 թվին լրովին կատարել հնգամյա պլանի նախադրումները:

Մենք 1932 թ. հնգամյակը գերակատարում ենք՝ քարածխի գծով՝ 20%-ով (90.5 միլ. տոնն պլանով նախատեսված 75 միլ. տոննի դիմաց), նավթինը՝ 28%-ով (28 միլ. տոնն 21.7 միլ. տոննի դիմաց), պղինձը՝ 19%-ով (100.000 տոնն 84.700-ի դիմաց), ամբողջ մեքենաշինարարութիւնն ամբողջապես վերցրած՝ 42-43%-ով, և կեկտրոտեխնիկայինը՝ 7-8%-ով, տրակտորինը՝ 47%-ով (82.000 հատ 55.000-ի դիմաց):

Չնայած տարեց-տարի սիստեմատիկ աճմանը՝ մենք, սակայն դեռ լրովին չենք կատարում հնգամյակը մի քանի ճյուղում, ինչպես որինակ՝ տեքստիլ և մի քանի այլ ճյուղերում:

Գյուղատնտեսութեան բնագումարում 1932 թ. ցանքատարածութեան ավելացումը թիւնչե 141 միլ. հեկտար, նշանակում է հնգամյակի լրով կատարում:

Տրանսպորտի բնագումարում 1932 թ. բեռնաշրջանառութեան ավելացումը միւնչե 320 միլ. տոնն, նշանակում է հնգամյակի գերակատարում 13.8%-ով (ըստ հնգամյա պլանի 1932-33 թվերի համար նըշվում էր 281 միլ. տոնն):



1932 թվականը կհանդիսանա հսկայական քանակությամբ նոր հիմնական կապիտալի, նոր գործարանների և ցեխերի շահագործման գերվելու մի տարի։ Այն գեթարուկությունները, վերոնց մենք դեմ առանք 1930 և 1931 թ. թ. մեր առաջին դիզանոսները գործարկելիս, պետք է մեզ ստիպեն բացառիկ ուշադրություն նվիրելու այս հարցին և նրա հետ կապված մյուս բոլոր հարցերին, առաջին հերթին՝ կադրերի և տեխնիկայի տիրապետման հարցերին։

Վերջապես, 1932 թվականը զգալի տեղաշարժերի մի տարի յե աշխատավորության նյութական-կենցաղային դրուկյան հետագա բարելավման դժուր—թեթև արդյունաբերության աճում և մատակարարման բարելավում, բնակարանային և կոմունալ շինարարության աճում, խորհրդային առևտրի ծավալում, կուլտուրական մեծ շինարարություն և այլն։

1932 թվականը—հնգամյակի ավարտման տարին—միաժամանակ պետք է լինի մի տարի, ուր մենք վողջ բայլելիկյան հաստատակամությունամբ պետք է ուժ տանք ժողովրդական տնտեսության կարևորագույն բնագավառներին։ Հնգամյա պլանը կատարելու համար, վողջ ժողովրդական տնտեսության դժուր այդ պլանը կատարելու համար, հարկավոր է, վոր մենք ամբողջ ուժով կառչենք, ամենից առաջ, նրա առաջատար ողակներին։ Միայն այն ժամանակ մենք դուրս կբաշենք ամբողջ շղթան, միայն այն ժամանակ մենք կկարողանանք կատարել 1932 թ. ժողովրդատնտեսական պլանը և դրանով իսկ ավարտել հնգամյակը։

Վերոնց են այդ ողակները։ Այդ ածուխն է, այդ մետաղն է, այդ մեքենաշինարարությունն է, հատկապես ածխին և մետալուրգիային սպասարկող մեքենաշինարարությունը, և տրանսպորտը։ Այս այս չորս ողակներն են, վոր մենք ամեն գնով պետք է դուրս քաշենք։ Այդ կողմը պետք է ուղղվի բանվոր զասակարգի, կուլակցության յեռանդի մաքսիմումը։ Այս խընդիրներին համապատասխան պետք է լուծվեն մնացած

բոլորը, ասենք՝ կապիտալ ծախքերի տեղադրումը, մեքենաշինարարություն, առանձին ճյուղերի արտագրություն աճումը, աշխատավարձի, մատակարարման քաղաքականություն և այլն։

## Մետալուրգիա

Մետալուրգիայի հետամնացությունը ժողովրդական տնտեսության գարդացման նկատմամբ այլևս բացարձակապես անհարդուրելի յե։ Դուք գիտե՞ք, թե վողջ ժողովրդական տնտեսության մեջ ինչպիսի դրութվարություններ ստեղծեց մետաղի արտադրության ցածր մակարդակը 1931 թ.։ Չկա ժողովրդական տնտեսության վող մի ճյուղ, վոր դրանից տուժած չլինի։ Տրանսպորտը չկարողացավ ստանալ իրեն անհրաժեշտ տեխնիկական ղրնումը—չոգեմեքենաներ, վագոններ, ռեյսեր և այլն։ Գյուղատնտեսությունը քիչ քանակությամբ գյուղատնտեսական մեքենաներ ստացավ՝ դրխավորապես չնորհիվ մետաղի պակասի։ Նմանապես վող—բավարար քանակությամբ մեքենաներ ստացավ նաև վողջ ժողովրդական տնտեսությունը, անհրաժեշտ քանակությամբ մետաղով չապահովեց նաև շինարարությունը։

Սե մետալուրգիան դուրս պետք է քաշել ինչ գնով ուզում է լինի։ Սե մետալուրգիայի 1932 թ. ծրագիրը յարված է։ Հարկավոր է արտադրել 9 միլ. տոնն թուջ 4.9 միլ. տոննի դիմաց, վորը փաստորեն ձուլվելու յե 1931 թ., այսինքն՝ 1932 թվի համար մենք համարյա կրկնապատկել ենք արդյունաբերությունը։ Այնուամենայնիվ, այդ ծրագիրը միանգամայն պարտադիր է, և բանվոր դասակարգը հանդիպական պլանի կարգով, առաջին հերթին՝ մետալուրգիական ձևոնարկությունների բանվորները պետք է մտածեն, թե չի՞ կարելի արդյոք դերակատարել այս 9 միլ. տոնն թուջի պլանը և յերկրին տալ 10 միլ. տոնն, վորովհետե մետաղի կարիքը, մետաղի ծարավը չի բավարարվում 1931 թվի



Համեմատությունը ամբողջ աշխարհում գերակշռել է կրկնապատկված ծրագրով անգամ:

Այս տարվա 5-35 միլ. ստույգատի դիմաց, 1932 թվականը պետք է տա՝ 9.45 միլ. տոննա 4.05 միլ. մամլած յերկաթի դիմաց՝ 6.66 միլ. տոննա: Դրանից բացի, մետալուրգիայի առաջ մեծ խնդիր է դրված նաև բարձրակարգ մետաղի քանակականում, վորպիսին պահանջվում է մեր ավտոտրակտորային արդյունաբերության, դաղդյաճաչինության, տուրբինաչինության և այլ ճյուղերի համար: Բարձրորակ մետաղի արտադրանքը 1932 թ. պետք է հասցնել 676,000 տոննայի՝ 1931 թ. 200,000 տոննայի դիմաց, այսինքն՝ ավելի քան յետապատկել:

Ան մետալուրգիայի ծրագրերը կատարելու համար անհրաժեշտ է զարկ տալ դոմենյան փառարանների կառուցմանն ինչպես նոր, այնպես էլ դոյուկթյուն ունեցող գործարաններում:

Այս ծրագրի կատարման նշանակությունը վորոշվում է այն բանով, վոր դոյուկթյուն ունեցող ագրիգատների սպասարկումը առավելագույն հնարավորության չափով բարձրացնելու պայմանով (դոմենյան փառարանների ծախսի, սպասարկման կոեֆիցիենտը բարելավելով 1931 թ. 1.81-ից 1932 թ. պետք է հասնի 1.43-ի) 1932 թ. ընթացքում աշխատանքի անցնելիք նոր ագրիգատներից հոտանանք թուլի ամբողջ արտադրության 31.2%-ը, պողպատի՝ 23.8%-ը և մամլած յերկաթի՝ 13.7%-ը:

Մետալուրգիայի շինարարության մեջ մենք դնում ենք 1800 միլ. սուբյի, 1931 թ. 1027 միլ. ռուբլու դիմաց: Մենք պետք է վերջացնենք Մագնիտոգորսկի, Կոկչեդեկի և Զապորոժիեյի մետալուրգիական գործարանների առաջին հերթերի շինարարությունը, այդ յերեք գիգանտների վրա դնելով 529 միլիոն ռ., հիմնականում վերջացնենք հարավային և Ուրալյան մետալուրգիայի վերակառուցումը, զարկ տանք Նովո-Տադիլյան, Կրիվորոժիեյի և Ազովյան գործարաններին:

բաններին շինարարությանը, սկսենք Բակալյան գործարանի շինարարությունը:

Այս փիթխարի շինարարական ծրագրին, իհարկե, կպահանջի վերարաշինել բոլոր նյութական արժեքներն ի նպատակ մետալուրգիայի: Առանց վորջ ժողովրդական տնտեսության ոգնության, այս ծրագրերը չի կարող դուրս գալ: Ուստի, թե՛ մեքենաշինարարության տեսակետից, թե՛ մարդկային ուժի և Կադրերի տեսակետից ամեն ինչ պետք է ուղղել այդ կողմը, վորպեսզի այս խնդիրը կատարվի ինչ դնով ուղում է լինի: Մետալուրգիայի խնդրի լուծումից կախված է վորջ հնգամյակի կատարումը, կախված է 1932 թ. պլանի կատարումը, կախված է նաև յերկրորդ հնգամյակի կատարումը, վորովհետև 1932 թվականը բազա պետք է ստեղծի այդ յերկրորդ հնգամյակի համար:

Մետալուրգիայի ուժերն ծավալումը կատեգորիկ կերպով դնում է մետալուրգիայի համար սեխական մեքենաշինարարական բազա ստեղծելու հարցը: Այս բնագավառում առաջիկ, քան վորեև այլ տեղում անթույլատրելի չե ներմուծման հետագա որինետացիան:

Ահա թե ինչու՝ մեքենաշինարարության պլանի հանդուցալին մասն է հանդիսանում ներգրումները կենտրոնացնել մետալուրգիական սարքավորման 2 հիմնական գիգանտներին—Ուրալմաշտրոյի և Կրամմաշտրոյի շինարարության վրա:

Մենք պետք է աշխատանքի կազմակերպման քնագավառում, աշխատավարձի բնագավառում, վերջապես մատակարարման բնագավառում, այս բոլոր հարցերում մետալուրգիան առանձնացնենք իբրև արդյունաբերության այնպիսի մի ճյուղ, վորը դոմնվում է բաշառիկ առանձնաշնորհյալ վիճակում, և նրա վրա կենտրոնացնենք բանվորական լայն մասսաների ուշադրությունը:

Բնակարանային շինարարությունը մետալուրգիական գործարանների շրջաններում նույնպես պետք է



խոշոր զարգացում ունենա, վորպեսզի մշտական բան-  
վորներ ստեղծվեն, վորպեսզի պայքար մղվի հոսու-  
նության դեմ, վորպեսզի աղքատիսով բարձրանա աշ-  
խատանքի արտադրողականությունը:

Մետալուրգիական արդյունաբերությունն ընդհանուր-  
նեղի բնակարանային շինարարության դժուր դալ տարի  
ներգրվում է 225 միլ. ռ., վորպիսին հնարավորու-  
թյուն կտա տեղավորել 209 հազար հոգուց բաղկացած  
նոր բանվորական աղքատնականություն:

### Ա ծ ու խ

Քարածուխը նույնպես պետք է իր վրա բեռնի  
կուսակցության և բանվոր դասակարգի ուշադրու-  
թյունը: Մենք չենք կարող կրկնել այն, ինչ ունեյինք  
1931 թ., յերբ ածխի հանույթի ուժեղ անկման չնորհիվ  
մենք հսկայական դժվարություններ ունեցանք վողջ  
ժողովրդական տնտեսության մեջ—թե՛ տրանսպոր-  
տում, թե՛ արդյունաբերության մեջ և թե՛ մանավանդ  
մետալուրգիայում:

1931 թ. 57.6 միլ. տոնն ածխի հանույթի դիմաց  
ժողովրդական տնտեսությունը 1932 թ. պահանջում է  
90 միլ. տոնն ածուխ, և այդ առաջադրությունը պետք  
է կատարվի ինչ գնով ուղղում է լինի: Ընդ վորում ար-  
դեն 1932 թ. մենք պետք է զղալիորեն բարձրացնենք  
նոր շրջանների տեսակարար կշիռը, վորովհետեւ չի կա-  
րելի հետադաշում ժողովրդական տնտեսության զար-  
գացումը հիմնել լոկ Դոնբասի վառելանյութային բա-  
ղայի վրա:

Ածխի պրոբլեմի լուծումը 1932 թ. ընթանալու յե  
յերկու ուղղություններ: Առաջինը վերաբերում է հանքե-  
րի հանույթային կարողության ընդարձակման միջո-  
ցառումներին և նրանց տեխնիկական վերադիմանը:  
Յերկրորդը կապված է այնպիսի պայմանների ստեղծ-  
ման հետ, վորոնք հեշտացնեն առկա կարողության  
չահագործումը, բարձրացնեն աշխատանքի արտադրո-  
ղականությունը, ամրացնեն այն տեղաշարժերը, վոր-

պիսիք ձեռք բերվեցին ածխի ձեղքվածքի վերացման  
գործում 1931 թ. վերջին յեռամսյակում:

1932 թ. մենք քարածխի արդյունաբերության կա-  
պիտալ շինարարության մեջ դնում ենք 810 միլ. ռ.,  
1931 թ. 587 միլ. ռուբլու դիմաց, ըստ վորում հան-  
քային շինարարության դժուր ներդրվող միջոցների  
հիմնական մասը գնում է նախորդ տարիներում անց-  
կացված հանքերի վորումն ուժեղացնելուն, և միայն  
13.420 հազար ռուբլին ծախսվում է նոր շրջաններում  
նոր հանքեր գցելու վրա:

1932 թ. սկզբին վորման ընթացքում գտնվող հան-  
քերի ընդհանուր կարողությունը կազմում է 185 միլ.  
տոննի կարողություն: Այս յերկու թվերը բավականա-  
չափ բնորոշում են ներդրումների՝ պլանով նախատես-  
ված կենտրոնացումը շարունակվող հանքային շինա-  
րարության վրա:

Ընդ վորում հարկավոր է ընդգծել, վոր առանձին  
առաջաններում վորման ընթացքում գտնվող կարո-  
ղության բաշխումը խստիվ փոխում է նրանց միջև յե-  
ղած համեմատությունը՝ քարածխի նոր առաջանների  
դերն զգալիորեն բարձրացնելու ուղղությամբ:

1931 թ. փորման ընթաց- 1932 թ.  
հանույթը ընդ գտնվող հանույթը  
կարողությունը

(միլիոն տոննի միջև)

|                    |      |      |      |
|--------------------|------|------|------|
| Դոնբաս             | 36.3 | 87.0 | 56.0 |
| Կուզբասի ածուխ     | 5.4  | 43.7 | 11.0 |
| Ուդալի ածուխ       | 3.1  | 20.4 | 6.0  |
| Մոսկվայի ածուխ     | 2.7  | 7.6  | 5.68 |
| Ղարադաշղ           | 0.5  | 3.8  | 2.50 |
| Միջին Ասիայի ածուխ | 0.6  | 3.6  | 1.5  |
| Արևելքի ածուխ      | 2.0  | 11.2 | 3.7  |

Այս թվերը պարզ բնորոշում են տեղաշարժը  
դեպի Արևելք: 1932 թ. անցկացվելիք հանքերը ել ա-  
վելի կուժեղացնեն այդ տեղեկացը, վորովհետեւ նոր



կարողության 13,5 միլ. տոննից 5 միլ. տոնն ընկնում է Մոսկվայի ածխին, 4,5 միլ. տոնն՝ Կուզբասի ածխին, 3 միլ. տոնն՝ Արարաղանդին և 1 միլ. տոնն՝ Միջին Ասիային:

Նոր կարողության ամսան հետ միասին 1932 թ. կապիտալ աշխատանքներն ապահովում են նոր առաջադիմական քայլը ածխահանույթի մեքենայացման ասպարիզում: Ածխի մեքենայացված հանույթի ընդհանուր տոկոսը Միությունում 1932 թվին կհասնի 72%-ի 1931 թ. 61%-ի դիմաց:

Մի շարք ավազաններում ածխահանույթի մեքենայացումը քանակապես ավարտվելու վրա չէ: Ուստի հարկավոր է հատկապես ծանրանալ մեքենայացման պրոցեսի վերակազմակերպման վրա: Մի ամբողջ շարք դեպքերում արտադրական պրոցեսի առանձին ողակներին մեքենայացումը քիչ թե շատ եփեկտավոր արդյունքներ չի տալիս ընդհանուր առմամբ հանգամանքի, վոր սահմանակից ողակներում ձեռքի աշխատանք է կատարվում և դրանով է չիք և դառնում մեքենաների կիրառման եփեկտը: Կոմպլեքսային մեքենայացումը 1932 թ. վճռական դիրքավորումը պետք է հանդիսանա:

Ածխի վերաբերմամբ պետք է նույնն ասել, ինչ ասացի մետաղի վերաբերմամբ: Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը պետք է շրջադարձ կատարեն դեպի արդյունաբերության այս ճյուղը: Մեքենաշինարարության տեսակետից մենք պարտավոր ենք ածխարդյունաբերությունն սպասարկել ավելի մեծ չափով քան այդ արել ենք մինչև այժմ: Մենք պետք է բնակարանային շինարարության ասպարիզում մեծ ծրագիր ծավալենք, ածխարդյունաբերության մեջ բանվորների մշտական կազմ ստեղծելու համար:

Ածխի դժով բնակարանային շինարարության մեջ մենք դնում ենք 238 միլ. ո., վորը բացառիկ նշանակություն է ունենալու բանուժի հոսունություն վերացման համար:

Աշխատավարձի մակարդակի տեսակետից քարած-

խի արդյունաբերությունը փոխադրվում է 4-րդ տեղը, 9-րդ տեղի դիմաց, վոր նաև դրավում էր 1913 թ.:

Մենք պետք է մատակարարման բնագավառում, աշխատավարձի բնագավառում ածխարդյունաբերության վողջ նյութական-տեխնիկական և կազմակերպչական ասպարիզման բնագավառում արտակարգ միջոցներ ձեռք կառնենք, և ածխարդյունաբերության համար ստեղծենք այնպիսի բացառիկ դրություն մեր Ժողովրդական տնտեսությունում, վորը հնարավորություն տա կատարելու ածխարդյունաբերության 1932 թ. լարված առաջադրությունը:

### Տրանսպորտ

1932 թ. պլանում տրանսպորտը հանգուցային կետերից մեկն է հանդիսանում: Մենք չենք կարող մեզ թույլ տալ կրկնելու այն, ինչ կար 1931 թ., յերբ տրանսպորտի հետամնացությունը մի ժամանակ վիժեցնում էր արդյունաբերության մի քանի ճյուղերի, մի քանի առանձին ձեռնարկությունների աշխատանքը: Մենք չենք կարող թույլ տալ, վոր տեղի ունենա այն, ինչ տեղի ունեցավ 1931 թ. սկզբին, յերբ առանձին շրջանների և տոնիսին ձեռնարկությունների միջև փաստորեն կապը խզվեց: Տրանսպորտի հետամնացությունը վիթխարի դեր խաղաց վողջ Ժողովրդատնտեսական պլանի թերակատարման գործում:

Յերկաթուղային տրանսպորտը 1932 թ. պետք է փոխադրի 320 միլ. տոնն բեռ, վորը 1931 թ. համեմատությամբ տալիս է աճում 28%-ով: Բեռնաշրջանառության զարգացման այս տեմպը նշանակում է, վոր տրանսպորտի աշխատանքի հնգամյա պլանը կգերակատարվի արդեն 1932 թ.:

Ինչ է պահանջվում կատարելու համար այս լարված ծրագիրը, վոր գերադանցում է հնգամյակի վերջին տարվա նշումները: Բացի խոշոր կապիտալացրումներից, բացի նյութական-տեխնիկական վերադիմումից, ինչպիսին են վազոնները, շոգեմեքենաները, ջերմատարները, էլեկտրատարները և այլն, խոշոր նշա-



նախկին թիվը ունի դոյուլթյուն ունեցող չարժեքային կադ-  
մի ոգտապործման չափանիշների բարելավումը: Այս  
տեսակետից տրանսպորտում գործն ամենաին բարե-  
նպաստ պայմանների մեջ է: Ապրանքային վազոնի  
միջին օրական վազը պետք է հասցնել 128 կիլոմետ-  
րի, իսկ ասպրանքային չոգեմեքենային՝ 167 կիլոմետ-  
րի: Այս չափանիշների կատարման համար պայքարելը  
յերկաթուղային պրոլետարիատի կարևորագույն խն-  
դիրն է: Հարկավոր է ամեն գնով ձեռք բերել այդ չա-  
փանիշները, վերոնք գլխավորեն գերադասելով են այն  
չափանիշները, վերոնցով աշխատում եր տրանսպորտը  
1931 թ.:

Դրանից բացի, տրանսպորտը բավական մեծ զինա-  
վորում կատանա արդեն իսկ 1932 թ.: 1932 թ. տրանս-  
պորտը կատանա և չահագործման կղնի 50.000 վազոն.  
1300 չոգեմեքենա, 24 ելեկտրատար: Վերջապես,  
կգործադրվի նոր տիպի չարժիչ արդեն ավելի մեծ  
մասշտաբով, քան մինչև այժմ, այն է՝ շերմատարը:  
Մեր արդյունաբերությունը 1932 թ. տրանսպորտին  
պետք է տա 15 շերմատար: 500.000 տոնն ուելը հնա-  
րավորություն կտա զգալի աշխատանք կատարել դե-  
րի լավացման և նոր յերկաթուղային շինարարության  
ասպարիզում:

Տրանսպորտին տեխնիկական բազա ստեղծելու հա-  
մար, նրա ըստ ամենայնի արագ զարգացման համար  
1932 թ. նախատեսվում է ուժեղացնել Նիժնի-Տադելի  
վազոնի գործարանի և Լուգանսկի չոգեմեքենայի գոր-  
ծարանի շինարարությունը, վերոնք մեր տրանսպորտին  
հայթայթելու յեն ավելի ուժեղ չարժեքային կազմ, քան  
մինչ այժմ յեղածները: Այնուհետև զալիս է ելեկտրա-  
տարների գործարանը, վորի կառուցումն սկսվելու յե  
1932 թ.: Սա նույնպես չափազանց կարևոր օբյեկտ է,  
վորը մեղ հնարավորություն կտա անցնելու յերկաթու-  
ղների ելեկտրիֆիկացիային այն չրջաններում, ուր  
այդ ելեկտրիֆիկացիան հարցի միակ ճիշտ լուծումն է  
հանդիսանում:

Ցերկաթուղային շինարարության ասպարիզում բո-  
լոր կապիտալ աշխատանքների կենտրոնական նպատա-  
կըն է ընդարձակել հանգույցները, տրանսպորտային  
կապ հաստատել ու ապահովել Ուրալի և Կուզբասի մի-  
ջև: Սերբերից և Դոնբասից դուրս յեկող գծերը, — ահա  
թե ինչն է կարևորագույնը, ահա թե ուր են ուղղվում  
տրանսպորտում դրվող գլխավոր դումարները: Տրանս-  
պորտում ներդրվում է ընդամենը 2,500 միլ. ո., և  
այդ 2.500 միլ. ուրբլին կենտրոնացվում է շինարա-  
րության կարևորագույն բնագավառների և տրանս-  
պորտի տեխնիկական վերազինման համար միջոցներ  
ձեռք բերելու վրա:

Ջրային տրանսպորտը նույնպես խիստ պետք է  
աճի: 1932 թ. նա իր աշխատանքն ավելացնելու յե 31  
%-ով: Ջրային տրանսպորտի գծով կապիտալ աշխա-  
տանքները հանում են 420 միլ. ուրբլու, ջրային  
տրանսպորտի վրա փաստորեն ծախսված 312 միլ.  
ուրբլու դիմաց:

Տրանսպորտի տեխնիկական վերազինումն ուժե-  
ղացնելուն դուղընթաց, պրանը նախագծում է նաև մի  
չարք միջոցառումներ, վորոնք տրանսպորտում աշխա-  
տանքի բարելավված պայմաններ կստեղծեն: Աշխա-  
տավարձը տրանսպորտում ավելանում է 13 %-ով:  
Տրանսպորտում բնակարանային շինարարության, սո-  
ցիալ-կուլտուրական միջոցառումների և կադրերի պատ-  
րաստության գործում մենք 1932 թ. դնում ենք 155  
միլ. ո., 1931 թ. 100 միլ. ուրբլու դիմաց:

Մետալուրգիայի և ածխի հետ միասին, տրանս-  
պորտն առանձնացվում է մատակարարման հատուկ  
խմբում, վորը հնարավորություն կտա զգալի չափով  
բարձրացնել տրանսպորտի բանվորների նյութական  
մակարդակը:

#### Մեքենաշինարարություն

Մեքենաշինարարության մասին յեն արդեն խոսե-  
ցի: Ոոսեցի այն մասին, թե այդ մեքենաշինարարու-



թյան վար ուղղութիւններն են 1932 թ. պլանում առանձնապէս ընդգրկված :

Մենք պետք է մեքենաշինարարութեան մեջ ամենից առաջ յարգացնենք այն ճյուղերը, վորոնք առանձնապէս կարեւոր են ածխի և մետալուրգիայի համար :

Մենք պետք է զարգացնենք այն ճյուղերը, վորոնք սպասարկում են տրանսպորտին և մեր եներդեւորակային : Գիտաւորապէս այդ ուղղութիւնների վրա պետք է ծանրանալ : Մեքենաշինարարութեանը տրվում է խոշոր ծրագիր թե՛ արտադրութեան և թե՛ կապիտալ շինարարութեան գծով : Արդեն իսկ 1931 թ. մեքենաշինարարութեան ծրագիրը դերադանցեց այն, ինչ հնգամյա պլանով նշվում էր հնգամյակի վերջին տարվա համար : 1932 թ. մեքենաշինարարութեան բոլոր ճյուղերի արտադրանքը կազմելու յետ 6.800 միլ. ո. և տարւոյ յետ 45 % -ով, 1931 թ. սպասվելիք արտադրանքի համեմատութեամբ :

Այսպիսով, 1932 թ. գրեթէ 1½ անգամ ավելի մեքենաներ ու մետաղյա իրեր են արտադրվելու, քան 1931 թ. : Բոլոր տեսակի մեքենաների գծով հսկայական ավելացում կա, բայց դրանից բացի մենք արտադրելու յենք նաև նոր տեսակի մեքենաներ :

Որինակ, մետալուրգիայի և ածխի այն հսկայական ծրագրին սպասարկելու համար, վորի մասին յետ խոսեցի, մեր գործարանները պետք է արտադրեն 6 բլյումինը, 19 մամլոյ դադդյահ, 35 կքակավատոր, 600 ծանր փորիչ մեքենա, 400 թեթև փորիչ մեքենա և այլն : Հատուկ նշանակութիւն ունի նաև նոր արտադրութիւնների կազմակերպումը :

Նոր մեքենաշինարարութիւնը 1931 թ. ապացուցեց, վոր աշխարհում չկա այնպիսի մեքենա, վորի արտադրման յեղանակին մենք չկարողանանք տիրապետել : Առավել ևս մեծ պատասխանատւութիւն է դրւում նրա վրա 1932 թ., վորովհետև մեր մեքենաշինարարական արդյունաբերութեան վերակառուցման առաւելանից զգալի չափով կախված կլինի յերկրի աղատադրւմն ոտարեկրյա կախումից :

## Շինարարական ծրագիրը

1932 թվականը հսկայական շինարարութեան տարի յետ լինելու : 1932 թ. ներդրումների հիմնական համեմատութիւններն ըստ ժողովրդական տնտեսութեան ճյուղերի բնորոշվում են հետևյալ կերպ .

|                                             | 1931 թ. | 1932 թ. |
|---------------------------------------------|---------|---------|
| Ամբողջ ժողովրդական տնտեսութիւն . . . . .    | 16.046  | 21.100  |
| Այդ քիւմ արդյունաբերութիւն . . . . .        | 8.200   | 10.700  |
| Այդ քիւմ ԺՏԳԽ-ի արդյունաբերութիւն . . . . . | 6.086   | 7.550   |
| Այդ քիւմ՝                                   |         |         |
| ճարածուխ . . . . .                          | 587,5   | 810     |
| և մետալուրգիա . . . . .                     | 1.027,2 | 1.800   |
| գյուղատնտեսութիւն . . . . .                 | 3.600   | 4.360   |
| Տրանսպորտ . . . . .                         | 2.720   | 3.530   |

Շինարարական ծրագիրը վողջ ժողովրդական տնտեսութեան գծով բարձրանում է մինչև 21,1 միլիարդի, 1931 թ. ծախսված 16,1 միլիարդի դիմաց, ընդ վորում, յետք վերցնելու չինքն ամբողջ արդյունաբերութիւնը և՛ այն, վոր գտնվում է ԺՏԳԽ-ի Մատոդկոմատի տնտեսութեան տակ, և՛ Հողժողկոմատի արդյունաբերական ձեռնարկութիւնները, և՛ յերկաթուղային տրանսպորտի արդյունաբերական ձեռնարկութիւնները, վերանորոգման գործարանների Համադիւթեական Ընկերութեան (В О Б Б) գործարանները, — ապա կապիտալ շինարարութեան բոլոր հատկացումների կեսն ընկնում է արդյունաբերութեանը, վորն ստանում է 10.700 միլ. ո. : Այս 10.700 միլ. ուղղուց առյուծի բաժինն ստանում են արդյունաբերութեան



այն ճյուղերը, վերոնց մասին յես արդեն խոսեցիք—  
քարածուխը, սև մետաղուրդիան, մեքենաշինարարու-  
թյունը: Սոչոր հասկացումներ են վերցվում գյուղա-  
տնտեսության համար, այդ հասկացումները հասնում  
են 4.360 միլ. ուերլու (յեթե վերցնելու լինենք թե՛  
Հոգեփոխանատի սխառնում գտնվող գյուղատնտեսու-  
թյունը և թե՛ Մատթողկոմատի ու այլ գերատեսչու-  
թյունների տնորինություն տակ յեղող գյուղատնտե-  
սությունը):

Տրանսպորտի բոլոր տեսակների կապիտալ աշխա-  
տանքները կադմելու յեն 3.700 միլ. ու.:

1932 թ. կապիտալ աշխատանքների պլանի հա-  
կանչական դժերից մեկն է հանդիսանում բնակարանա-  
յին և կոմունալ յայն շինարարությունը: 1932 թ. բո-  
լոր դժերով բնակշինարարության մեջ դրվելու յե 1.942  
միլ. ու., իսկ կոմունալ շինարարության մեջ՝ 950 միլ.  
ու.: Այսպիսով, բնակարանային և կոմունալ շինարար-  
ությունը միասին վերցրած հասնելու յե 3 միլիարդ  
ուերլու:

1932 թ. կապիտալ աշխատանքները վոչ միայն ա-  
վարտում, այլ և գերակատարում ենք ամբողջ հնգամ-  
յակի շինարարական ծրագիրը, և այդտեղից բղխում  
է ներդրումներն առավելագույն չափով շինարարու-  
թյան մեջ կենտրոնացնելու կատեգորիկ անհրաժեշտու-  
թյունը, հատկապես այն շինարարության մեջ, վորը  
վերջանալու յե 1932 թ. այն հաշվով, վորպեսզի ապա-  
հովվի տեխնիկապես կատարված հիմնական կապիտա-  
լի վիթխարի աճը 1932 թ.:

Անցյալ տարիներից փոխանցված որբեկանների վրա  
ներդրումները կենտրոնացնելու աստիճանը բնորոշվում  
է այն բանով, վոր ԺՏԳՈ-ի արդյունաբերության դժով  
դերլիմիտային որբեկանների մեջ դրվող 4.850 միլ. ու.  
ընդհանուր գումար ունենալով, մենք 4.200 միլ. ու.  
ներդրում ուղղում ենք շարունակվող շինարարական  
որբեկանների վրա, և միայն 650 միլիոն ուերլին է գնում  
նոր սկսվող շինարարություններին: Ելեկտրոշինարա-

րությունն պլանում 800 միլ. ուերլու կապիտալ աշխա-  
տանքներից նոր շինարարությունն ընկնում է ընդամենը  
75 միլ. ու.: Ներդրումների այս կենտրոնացումը շարու-  
նակվող աշխատանքների վրա միանգամայն անհրա-  
ժեշտ պայման է, վորը հնարավորություն կտա 1932  
թ. ակտիվացնել առաջուց դրված միջոցների մի խոշոր  
դրամար:

Իր ծավալով վիթխարի այս պլանը կարող է կա-  
տարվել միայն այն դեպքում, յեթե շինարարական  
դործում մենք լուրջ տեղաշարժեր ունենանք: 1932 թ.  
համար մենք նախադժում ենք շինարարության ինք-  
նարժեքն իջեցնել 17 %-ով, — յեթե խոսելու լինենք  
դուռ շինարարության մասին: Այս առաջադրությունը  
միանգամայն անհրաժեշտ է, վորովհետև այլ կերպ  
այդ գումարով մենք չենք կատարի այն վիթխարի քա-  
նակություն մեջ աշխատանքները, վորպեսզի պլանով նա-  
խատեսվում են:

Այդպիսին է շինարարական պլանի ընդհանուր  
բնութագրությունը:

Յես կնշեմ այս շինարարական ծրագրի մի քանի  
առանձին բնագավառները, վորոնք ամենից ավելի կա-  
րևոր են այն բնագավառներից հետո, վորոնց մասին  
յես խոսեցի, այսինքն՝ մետաղից, ածխից, տրանսպոր-  
տից և մեքենաշինարարությունից հետո:

1932 թ. հունվարի 1-ին բոլոր ելեկտրոկայանների  
սահմանված կարողությունը կկազմի 4.050 հազար  
կվ. 1931 թ. հունվարի 1-ի 2.900 հազար կվ.-ի դե-  
մաց: Այսպիսով, ավելի քան 1 միլիոն կվ.-ով մենք  
ավելացնում ենք մեր ելեկտրոկայանների կարողու-  
թյունը 1931 թ.: 1932 թ. մենք շահագործման ենք  
դնելու ևս 1½ մի. կվ., վորից 1 միլիոնը չընդհանրա-  
կայաններում, և կատարելու յենք հաղորդման դժերի  
ու յենթակայանների զգալի շինարարություն, հատ-  
կապես Դոնբասում, Պրիդնեպրովիյում, Ուրալում:  
Կարողությունների աճումը հնարավորություն կտա  
զգալի չափով ավելացնել ելեկտրական էներգիայի ար-



տաղրությունը: Այսպես, չըջանային կայաններում 1931 թ. 6 միլիարդ կլվ. ժամից մենք ելեկտրական են- ներգլխայի արտադրությունը հասցնում ենք 10 միլի- արդի, կամ 66 %-ով, իսկ ՍՍՀՄ-ի բոլոր կայանների արտադրանքը հասնելու յե 16,7 միլիարդ կլվ. ժամի, 1931 թ. 10,6 միլիարդի դիմաց: Ելեկտրոշինարարու- թյան գծով կապիտալ աշխատանքների ծախսը 1932 թ. կկազմի 800 միլիոն: Ելեկտրիֆիկացիայի բնադա- վառում չինարարության հատկանշական դժերից մեկն է հանդիսանում խոշոր տեղաշարժը ջերմացնետրանե- րն չինարարության ուղղությամբ. մենք ունենալու յենք այդպիսի 26 միավոր, 126,1 միլիոն ուտրլու ծախ- քով: Կառուցվելիք հիմնական ջերմացնետրային են- Դանդառուերյան, Փրունգենսկի, Մոսկվայի Տեպլոտեխ- նիկական ինստիտուտի, Լենինգրադի Մոսկովսկի Նարո- մկի ուսյոնի, Մորմովո-Վանալինսկի, Իժմիսկի, Վո- րոնեժի, Պարիզի և Բադի ջերմացնետրաները:

Հիդրո-չինարարության բնադավառում, այնպիսի կայանների չինարարության ղուղընթաց, ինչպիսիք են՝ Դնեպրոստրոյը, Սվիրսը, Ռիոնը և այլն, պլանը նախագծում է Ջիրչիկի ուժեղ կայանի կառուցումը Մի- ջին Ասիայում, յերկու ուժեղ կայան Վոլգայի վրա- իմանովսկի և Ն. Նովոգորոդի մարզերում, մեկ կայան Լենինգրադի մարզում: Այսպիսով, Դնեպրոստրոյի կա- յանն ավարտելու հետ միասին մենք սկսում ենք շատ խոշոր մասշտաբ ունեցող նոր հիդրոչինարարություն:

Խոշոր չինարարական ծրագիր է իրադրոժվելու քի- միական արդյունաբերության գծով: Քիմիայի բազան մեղ մոտ ղզալի չափով աճել է: Բայց այդ աճումը չա- փազանց անբավարար է, և հարկավոր է, վոր մենք ա- մեն դնով ստեղծենք նոր հզոր բազա քիմիական ար- դյունաբերության զարգացման համար, ինչ չափով վոր այժմ քիմիայով չահագորդված են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը— և՛ դյուղատնտեսու- թյունը, և՛ արդյունաբերությունը, և՛ յերկրի արդյու- նաբերությունը:

Այսպիսով, 1932 թ. խոշոր ներդրումներ են լինում քիմիական արդյունաբերության մեջ, և մի ամբողջ շարք ձեռնարկություններ են կառուցվելու ուժգին թա- փով, իսկ նրանց մի մասը գործարկվելու յե արգեն իսկ 1932 թ.: Ծծմբաթթվուտի, կալցիում սոդայի և ամի- ոսկի արտադրանքի ավելացումն ընթանալու յե դլսավա- րապես ի հաշիվ նոր ձեռնարկությունների, այդ թվում Բերյոզնիկյան կոմբինատի, Նեմսկու և Վոդնեսենսկու կոմբինատների, մասամբ Բորրիկի կոմբինատի, Կելո- տինյան ծծմբաթթվուտային գործարանի և մի քանի այլ ձեռնարկությունների գործարկման:

Քիմիական արդյունաբերությունը կազմակերպում է մի ամբողջ շարք նոր արտադրություններ, վորոնք անհայտ էյին մեր տնտեսությանը: Այսպես, որինակ, ուժգին զարգանում է պլաստիկական զանգվածների արտադրությունը: 1932 թ. քիմիական պլաստիկական զանգվածների արտադրանքը կհասնի 54 միլ. ուտրլու, ընդ վորում կազմակերպվելու յեն պլաստիկական զանգ վածններից իրեր պատրաստելու մի ամբողջ շարք ար- տադրություններ:

Քիմիական արդյունաբերության ներդրումների ընդհանուր ծախսը կաղմելու յե 675 միլ. ո., 583 միլ. ուտրլու դիմաց:

Գունավոր մետալուրգիայի բնադավառում յենթա- դրվում է խոշոր չինարարություն կատարել և ղզալի- որեն ավելացնել արդյունաբերության աճումը: 1931 թ. ստացված 53.000 տոնն պղնձի դիմաց, մենք պետք է 1932 թ. ձուլենք 100.000 տոնն պղնձ. ցինկը՝ 11.400 տոննից 28.700 տոնն. կապաղը՝ 19.600 տոննից 46.250 տոնն: Գունավոր մետալուրգիայի կապիտա- յացրումները կաղմում են 600 միլ. ո., 1931 թ. ծախ- 375 միլ. ուտրլու դիմաց:

Ներդրումները կենտրոնացվելու յեն այն բնադա- վանների, այն ուղեկանների վրա, վորոնք կարող են ա- մենակարճ ժամանակում աշխատանքի դրվել:

1932 թ. ծախսվելիք վիթխարի չինարարական



ծրուգիւրը առանձնապէս ակտուալ է դարձնում արտադրողական ուժերը մեր վողջ Միութեան տերիտորիայում ռազմական և քաղաքական հարցը: Այստեղ ղեկավար սկզբունք պետք է հանդիսանան այն ցուցմունքները, վորը տվել է դեռևս Լենինը արդյունաբերութեանը առավելագույն չափով հումքի և վառելիքի հիմնական աղբյուրներին մոտեցնելու մասին: Դրան գուզընթաց, Լենինյան ազգային քաղաքականութեան անշեղ կիրառումը մեզ պարտավորեցնում է ԽՍՀՄ-ի տերիտորիայում արտադրողական ուժերի դասավորման հարցը լուծելիս՝ չարունակ հաշիւի առնել աղբային շրջանները տնտեսական տեսակետից ամեն կերպ ուռաջ քաշելու անհրաժեշտութիւնը, դրանով նյութական բազա ստեղծելով հետամնաց ժողովուրդներին սոցիալիստական շինարարութեան մեջ ներգրավելու համար:

Յենեւով այս հիմնական սկզբունքներից, կուսակցութիւնը պարզորոշ գիրեկտիվ տվեց արդյունաբերութեանը ղեկի Սրենելը չարթելու, յերկրորդ ածխամետաղաբերական բազա ստեղծելու, հետամնաց ազգային ծայր յեռերների ինդուստրիալ զարգացմանը դուրկ տալու մասին:

Այդ ստպարիկում մենք արդեն իսկ վճռական հանդուրժիւններ ենք ձեռք բերել 1931 թ.: Ուրալ-Յուդնեցկյան կոմբինատի շինարարութեան լայն ծախալումը, Ղարադանդի ներդրաւումը տնտեսական շրջանառութեան մեջ, տրանսպորտային խոշոր շինարարութիւնը Կադակստանում և Սիբիրում, — այս բոլորը մեզ թույլ են տալիս ասելու, վոր հնգամյակի առաջին 3 տարիներում մենք վճռական բեկում ունեցանք արտադրողական ուժերի տերիտորիալ դասավորման գործում:

1932 թվականը պետք է զգալի չափով դարգացնի այս բեկումը: Ինչքանով վոր 1932 թ. պլանի հիմնական աւանգը կադմում են մետաղը, ածխը, մեքենաշինարարութիւնը, տրանսպորտը, ալգապիւով էլ

ներդրումների բախշման գործում մենք գնում ենք դեպի այն մարդերն ու շրջանները, վորոնք այդ ճյուղերում վճռական են հանդիսանում: Ինական է, վոր դրա շնորհիւ Միութեան բոլոր մարդերի համաչափ աճումը անհամատեղելի յէ 1932 թ. ժողովրդատնտեսական հիմնական միտումի հետ: Սրան համապատասխան, կապիտալ ներդրումները կենտրոնացվում են ածխային, մետաղաբերական և մեքենաշինարարական վըճռական շրջաններում:

Ներդրումներն ըստ վճռական շրջանների և հանգույցների բաշխվում են հետևյալ կերպ. կենտրոնը (Մոսկվա, Իվանովո, Ն. Նովոգորոդ, Կենտր. Սևահողային մարզ) ստանում է ամբողջ տնտեսութեան գծով՝ 2800 միլ. ո., Սրենելը (Ուրալ, Սրենայան Սիբիր, Սրենայան Սիբիր) ամբողջ տնտեսութեան գծով՝ 3.220 միլ. ո., Հարավը (Ուկրայինա, Հյուսիսային Կովկաս) ամբողջ տնտեսութեան գծով՝ 3.980 միլ. ո.: Հենց միայն Ուրալ-Յուդնեցկյան կոմբինատին ընկնում է բոլոր կապիտալ ներդրումների 20.3 տոկոսը, իսկ արդյունաբերական կապիտալ ներդրումների՝ 30.2 %-ը: Հարավին ընկնում է համապատասխան կերպ՝ ներդրումների 24.8 %-ը, արդյունաբերութեան ներդրումների 29.8 %-ը: Այսպիսով, Միութեան յերկու հիմնական ածխամետաղաբերական բազաներն ստանում են բոլոր կապիտալ ներդրումների 45.1 %-ը: Իսկ յեթէ վերցնենք արդյունաբերութեան լայն, առաջին յերկու ածխամետաղաբերական բազաներն ստանում են բոլոր արդյունաբերական ներդրումների 60 %-ը:

Շինարարական և արտադրական ծրագիրն ըստ տնտեսութեան առանձին ճյուղերի, էլ ավելի խստիվ ընդգծում են այն տերիտորիալ տեղաշարժերը, վորոնք արդեն իսկ յերկում են այս ընդհանուր թվերից: Այսպէս, ելեկտրոշինարարութեան պլանը յիշում է յերկրի հիմնական ածխային շրջանների կարիքները լիովին ծածկելուց և կենտրոնական արդյունաբերական հանգույցների դեֆիցիտը վըճնացնելուց:



Շրջանային էլեկտրոկայանների 800 միլ. կապիտալ ներդրումներից Ուկրաինային ընկնում է 131.3 միլ., Ուբալին 93.5 միլ., Լենինգրադի մարզին՝ 122.1 միլ. և Մոսկվայի մարզին՝ 95 միլ. ու, վորն ամբողջապես վերցրած կազմում և լեկտրոէկոնոմիկայի բոլոր ներդրումների 51.1 %-ը: 1932 թ. չահագործման և դրվելու Դենպրոսարոյի կայանի առաջին հերթը 372.000 կվ. կարողութեամբ: Վիթխարի սկզբունքային նշանակութուն ունի Վոլգայի վրա 2 հիդրոէկայան կառուցելու փորձումը: Այդ նշանակում և ձեռնարկել Մեծ Վոլգայի պրոյեկտի լուծմանը: Կապիտալ աշխատանքների ուղղութեանը, ասենք թե ածխի գծով, նույնպես արտացոլում է այդ տեղաշարժը գեպի Արևելքը: Ածխի հանույթի ծրագիրը նույնպես չարժվում է գեպի Արևելքը:

Չափազանց աճում է Կուզբասի տեսակարար կշիռը— 7.5-ից 12.2 %, Զարադանդինը՝ 0.1-ից 3.2 %: Այստեղ աճում է Յենիսեյի մարզի ավազանի հանույթի տեսակարար կշիռը— 3.7-ից 6.4 %: Նավթարդյունաբերության գծով հին շրջանների տեսակարար կշիռը առաջին անգամ լինելով նվազում է. այսպես՝ Բաքվի տեսակարար կշիռը 1932 թ. կազմելու յն 55 %, 1931 թ. 58 %-ի դիմաց: Դրա փոխարեն խիստ աճում է Միջին Ասիական ու Մաջկուի նավթի տեսակարար կշիռը: Վերջինիս տեսակարար կշիռը 2.9 %-ից բարձրանում է 7.3 %-ի:

Մետաղի գծով նույնպես զգալի տեղաշարժ է կատարվում գեպի Արևելք: Թուրքի արտադրության գծով Զարափի տեսակարար կշիռը 1931 թ. 73.9 %-ից 1932 թ. իջնում է 61.1 %-ի: Կենտրոնը, զգալի աճում ունենալով հանդերձ, տեսակարար կշիռը 7.5-ից իջնում է 6.27 %-ի: Դրա փոխարեն Ուբալը 18.4 %-ի ցատկում է 25.4 %-ի: Մետաղի ամբողջ արտադրության տեսակարար կշիռում Սիբիրը բարձրանում է 7.3 %-ի: Արևելյան շրջանների տեսակարար կշիռն այդ զգալի ավելացումը պայմանավորվում է այն հանգա-

մանքով, վոր 1932 թ. գործարկվելիք 24 դոմենյան վառարաններից 10-ն ընկնում է Մադնիտոգորսկի և Կուզնեցկի գործարաններին իսկ 64 մարանյան վառարաններից այդ գործարաններին ընկնում է 19 վառարան:

Տրանսպորտի գծով նյութական ու ֆինանսական ռեսուրսների հիմնական մասսան կենտրոնանում է Մադնիտոգորսկի, Դոնբասի և Կուզբասի արտադրունակության ուժեղացման վրա. հիմնական աշխատանքների գծով (յերկրորդ գծեր, պրոֆիլի հարթում, կայարանների ավտոմատիկ շրջափակում, նորակառույց հանգույցներ) Դոնբասից և Սիբիրից դուրս յեկող գրծերին ընկնում է բոլոր ներդրումների 50 %-ից ավելին:

Նոր գցվելիք 1186 կվ. յերկրորդ գծերից 570 կվ-ը. այսինքն կեսն, ընկնում է Ուբալ-Կուզնեցկյան կոմբինատի տերիտորիային և Սիբիրից դուրս յեկող գծերին:

## Գյուղատնտեսություն

Զարգացման խոշոր պլան է ստանում 1932 թ. գյուղատնտեսությունը: Սոցիալիստական գյուղատնտեսության 1931 թ. հաղթանակը ԽՍՀՄ-ն գարձրեց խոշոր գյուղատնտեսության յերկիր:

Կոլեկտիվացման պլանի զգալի գերակատարմանը դուգրնիք, կոլտնտաբժումն առաջադրեց և ձեակերպեց սուրանքային անմնարոծութեան հանրախացումը, կոլտնտեսական սուրանքային ֆերմաներ ստեղծելու միջոցով: Այս կոլտնտեսական սուրանքային ֆերմաների յախ դարգացումը կազմում է կոլտնտեսական անանարոծութեան այն նոր ձեք, վոր ապահովում է նրա զարգացումն ամենից ավելի արդյունավետ և ամենից ավելի սուրանքային ձեով:

1931 թվին գյուղատնտեսության մեջ հետամնաց բնագավառ հանդիսացան բերքատվությունը, կաթ-



նաստվությունը, կաթնաստվությունը և դյուղատնտեսական արտադրութեան այլ վորակական ցուցանիշները: Այնինչ հենց խոշոր տնտեսութիւնը և միայն խոշոր տնտեսութիւնն է, վոր ունի ամենն, ինչ անհրաժեշտ է դյուղատնտեսութեան մեջ արտադրողականութիւնը բարձրացնելու, բերքատվութիւնը բարձրացնելու համար:

Սոցիալիստական Գյուղատնտեսութեան բացարձակ գերակշռութիւնն ամբողջ աշխատութեամբ դրեց նրա կազմակերպչական վերակառուցման հարցը: Խորհրդատնտեսութիւնները, վորոնք աճել են իրրե իսկական խոշոր տնտեսութիւններ հողազործութեան և անասնապահութեան առարկայում, հիւ-ի դիրեկտիւներ չհամաձայն վերակառուցվում են՝ հողամասը խորհրդատնտեսութեան հիմնական արտադրական միավորը դարձնելու ուղղութեամբ: Սրան համապատասխան, հացահատիկային խորհրդատնտեսութիւնները միավորումը հացահատիկային խորհրդատնտեսութիւններում կազմակերպել է մոտ 1,3 հազար հողամաս: «Սկոտովոդ»-ի, «Մաւրտրեստ»-ի և այլ միավորումների չափազանց խոշոր խորհրդատնտեսութիւնները փոքրացված են:

«Սկոտովոդ»-ի դժով դեկտեմբերի 10-ին դոյութիւն ունեցող 158 խորհրդատնտեսութիւններից 59-ը փոքրացվելով, դարձված են 120 խորհրդատնտեսութիւն, և խորհրդատնտեսութիւններում կազմակերպվում են 1.255 հողամասեր:

Վերակառուցվում է նաև կոլտնտչարժումը: Լրացալ տարում կոտնտնտեսութիւններում խոշոր աշխատանք կատարվեց ղեկավար կադրեր առանձնացնելու և ամրացնելու ուղղութեամբ: Ուշադիր վերաբերմունք բրիգադների նկատմամբ, կոլտնտնտեսութեան ղեկավարման կազմակերպչական ամրացում, սլայքար արտադրողականութեան նոր ու բարձրագույն ձևերի համար—այս ամենն ընթանում են սոցիալիստական գյուղատնտեսութեան ընդհանուր վերակառուցման դժով:

կուսակցութեան «նոր ձևով աշխատել, նոր ձևով ղեկավարել» յոդունդի իրացման դժով:

1932 թ. գյուղատնտեսութեան մեջ է մտնելու հրահայտական տրակտորային սլարկ՝ ավելի քան 1 միլ. ձիու ուժի, 11.000 ավտոմեքենա և 900 միլ. ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ:

1932 թ. գյուղատնտեսութեան մեջ մտնելիւ այս նոր մեքենային տեխնիկայի առանձնահատկութիւնը հանդիսանում է այն հանգամանքը, վոր 1932 թ. գյուղատնտեսութեան մեջ մտնող տրակտորներն ու բարդ մեքենաներն ամբողջապես սոցիալիստական արդյունաբերութեան արդյունք են: Գյուղատնտեսութեան մեքենամատակարարումը 1932 թ. կազմելու յե մի գումար, վորը հավասար է 1928 թ. գյուղատնտեսութեան մեջ յեղած մեքենաների ու գործիքների գրեթե ամբողջ արժեքին: Գյուղատնտեսութեան մեքենաների ամբողջ արժեքը 1928 թ. կազմում էր 1058 միլ. ռ.: 1932 թ. մենք մեր գյուղատնտեսութեան զաւտերն ենք հանում 900 միլ. ռուբլու միայն գյուղատնտեսական մեքենաներ: Բայց յեթե 1928 թ. դա ճնշող մեծամասնութեամբ ձիաքարչ կամ ձեռքի աշխատանքի գործիքները եր բաղկացած, ապա 1932 թ. դա 90 %-ով բաղկացած է լինելու բարդ ինվենտարից և մեքենա-տրակտորային քարչող ուժից:

Դուք բոլորդ դիտեք, վոր ամենադժվար բանը մեզ մոտ, հատկապես տնտեսութեան աճման, նրա խոշորացման սլայքաններում, բերքահաւաքն է: Սրան համապատասխան, գյուղատնտեսութեան վերադիմելութեան առանձնահատկութիւնը հանդիսանում է այն հանգամանքը, վոր բերքահաւաք մեքենաները կազմում են գյուղատնտեսութեան մեջ մտնելիւ գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների 67.2 %-ը:

Արդեն իսկ այս տարի գյուղատնտեսութեան մեջ կազմակերպվեցին 2½ միլիոն կոլտնտեսականների ու խորհրդատնտեսութիւնների բանվորների այնպիսի կադրեր, վորոնք տիրապետում են նոր գյուղատնտեսական



մեքենաներին, տրակտորային կոմբայններին և բարդ ինժեներներին: 1932 թ. այդ կադրերը կազմելու յեն գյուղատնտեսական վերակալ աշխատողների 5 միլիոնանոց մի բանակ Սորհրդային Միության դաշտերում: Գյուղատնտեսության մեջ տեղի յե ունենում հետամնաց, մաշող գյուղացիական աշխատանքի վերակալմուծությունը, այդ աշխատանքը բարձրանում և ինդուստրիալ պրոդուկտների աշխատանքի մակարդակին:

Դյուղատնտեսության մեջ մտնելիք նոր մեքենաների քանակը հնարավորություն կստեղծի մեքենատրակտորային կալանների շինարարությունը ծավալել Սորհրդային Միության բոլոր հողգործական շրջաններում:

Այդ նշանակում և, վոր Սորհրդային Միության բոլոր շրջաններում արմատանում են ՄՏԿ-ները, վորոնք անցած տարիների փորձով ցույց տվին, վոր կուտնտեսությունների սոցիալիստական ամրացման, նրանց տեխնիկական վերադինման հիմնական ձևն են հանդիսանում: ՄՏԿ-ների առաջ շատ մեծ խնդիրներ են դրված— հարկավոր և պայքար ծավալել տրակտորի լավագույն ոգտագործման համար, հարկավոր և պայքար ծավալել դիմադրկության դեմ տրակտորային պարկի կոտավարման գործում, տրակտորի ու ինվենտարի անվույթ խնամքի դեմ, գարգացնելով սոցիալիստական մրցությունը, հարվածայնությունը և դործավարձը՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման, տրակտորային պարկի ստավելագույն ոգտագործման համար:

1932 թ. պլանում անասնարուծության նկատմամբ ցույց արված կենտրոնական ուշադրությունը արտացոլում և նրա բոլոր ողակներում: Անասնապահական խորհանտեսությունների կապիտալ ներդրումները տվելանում են 1931 թ. համեմատությունում 30 տոկոսով, այնինչ ամբողջ գյուղատնտեսության ներդրումների ընդհանուր ծավալն ավելանում և միայն 21.2 %-ով: Շինարարության ամբողջ արժեքի 55 %-ը գնում և ա-

նասունների համար շենքեր կառուցելու վրա: Ավելանում և անասնապահական ինվենտարի տեսակարար կշիռը գյուղատնտեսական մեքենաների արտադրության մեջ: Անասնապահական տրեսները 1932 թ. պլանում գրավում են գյուղատնտեսական երկտրիֆիկացիայի ներդրումների 67.4 %-ը: Ավելանում և անասունների թիվը խորհանտեսություններում և կուտնտեսական ապրանքային ֆերմաներում: Այսպես, «Սկոտովոդ» միավորման հոտը 1932 թ. 2.1 միլիոն գլուխ անասունից բարձրանում և 2.950 միլիոնի, «Սվինովոդ» միավորմանը՝ 1 միլիոնից 2.9 միլիոնի, «Մասլովոդ» միավորմանը՝ 216.000 գլուխ կովից 320.000-ի, «Ուլյեվոդ» միավորմանը՝ 47 միլիոնից 73 միլիոնի: Կուտնտեսական ապրանքային ֆերմաների հոտն մսա-կաթնադործական կուտնտեսական ֆերմաների գծով կազմելու յե 11.1 միլ. գլուխ (հորթներով), «Սվինովոդ» կուտնտեսությունի գծով՝ 4.5 միլիոն և «Ուլյեվոդ» կուտնտեսությունի գծով՝ 9 միլ. գլուխ:

1932 թ. անասնապահության զարգացման կենտրոնական հարցն և հանդիսանում արտադրության վրա դահաա ճյուղերի ստեղծումը— խոզեր, թռչնեղեն և այլն:

1932 թ. պլանի վճռական ողակն և հանդիսանում՝ պայքարել հացահատիկային մշակույթների բերքատվության բարձրացման համար, բերքահավաքի կուտնտեսների դեմ իսկական պայքար մղելու— համար: 1932 թ. պլանում նախագծված և բերքատվությունը բարձրացնել հեկտարից 8½ ցենտների չափով: Այդ բերքատվությունը 1932 թ. հացահատիկի հավաքը կավելացնի 120 միլ. ցենտներով, այնինչ 720 միլ. փթով: Այդ ընդձում և բերքատվության բարձրացման ամբողջ նշանակությունը: Բերքատվության 1 տոկոսի բարձրացումը կտա հացահատիկի հավաքման այնպիսի խոշոր և ֆեկա, ինչպիսին և 720 միլ. փութը, ուստի ամեն դնով այդ բարձրացումը ձեռք բերելու խնդիրը



կարևորագույն խնդիր է գյուղատնտեսության ասպարեզում 1932 թ.:

1932 թ. գյուղատնտեսության պլանը միաժամանակ մեր թեթև արդյունաբերության հումքային բաղադրի հետագա զարգացման պլանն է հանդիսանում: ՄՏԿ-ների հաջող շինարարությունը, բամբակացան, ճակնդեղացան և վուշի չրջաններում, ագրոտեխնիկայի զարգացումը խորհրդային գյուղատնտեսության և կոլտնտեսություններում, պետք է ապահովեն բամբակի, վուշի և չաքարի ճակնդեղի բերքի մեծական ավելացումը:

Բամբակի, վուշի և ճակնդեղի նոր բերքահավաք մեքենաները, վուշի ու կանեփի մշակման 150 գործարանների կառուցումը հեղափոխություն կառավարեն գյուղատնտեսության այս հետամնաց և ծանրոշխատ ճյուղերում:

Սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռությունը գյուղատնտեսության մեջ, վորը մենք ձեռք ենք բերել 1931 թ., դալ տարվա համար կապահովի համատարած կոլեկտիվացումն հիմնականում ավարտելու գործը, կոլեկտիվացված տնտեսությունների տոկոսը 72-75-ի հասցնելը, դրանով իսկ հիմնականում ապահովելով կուլակության վերացումը՝ վորպես դասակարգի:

Բանվոր դասակարգի և կոլտնտեսականների քարեկեցության մակարդակի բարձրացում

Գյուղատնտեսության և խոշոր արդյունաբերության ուժման հիման վրա թեթև արդյունաբերությունը մեծ աճում է ստանում 1932 թ. պլանում: Թեթև արդյունաբերության ռեսուրսներն զգալի չափով ավելանում են: Սննդի արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1932 թ. աճում է 36 տոկոսով 1931 թ. համեմատությամբ, կոստերի արդյունաբերությունը՝ 80 %-ով, յուղագործականը՝ 69 %-ով, չաքարինը՝ 58 %-ով, ձկանը՝ 53 %-ով:

4 խոշոր ու միջակ մասկոմբինատների շինարար-

բության ավարտումը և նոր մասկոմբինատների կառուցումը 1932 թ. ամուր բաղա կապահովեն մասշտաբական արդյունաբերության օոցիալիստական վերակառուցման և մաի բոլոր մնացորդների առավելագույն ողտագործման համար: Մենք ստեղծում ենք հսկայական մասշտաբական արդյունաբերություն: Արդյունաբերության այդ ճյուղը, վորը մեզ մոտ չափազանց ծանր մակարդակի վրա յեր և փաստորեն տնայնագործական բնույթ էր կրում, այժմ ստեղծվում է տեխնիկայի վերջին խոսքով: Մագործական արդյունաբերության ասպարիզում ստեղծվում են իսկական արդյունաբերական ձեռնարկություններ:

Բամբակի արտադրանքի աճումը, վորը նախապատերազմյան մակարդակը գերազանցում է յերկու անգամով, ապահովում է բամբակագործական արդյունաբերության աճումը 23,8 տոկոսով՝ 1931 թ. համեմատությամբ: 1932 թ. ծավալելու յե բամբակագործական կոմբինատի շինարարությունը Միջին Ասիայում, վորն իսկական, հիմք է դնելու բամբակագործական արդյունաբերությունը հումքային բաղադրի մոսեցնելու գործին:

Բամբակյա հյուսվածքեղենի զգալի աճումը կապահովի կարի արդյունաբերության ծավալումը, վորի աճումը 1932 թ. հասնելու յե 28 տոկոսի:

ԿԿ-ի հոկտեմբերյան պլենումը հատուկ ուշադրություն նվիրեց խորհրդային առևտրի ծավալման և բանվորների մատակարարման բարելավման հարցերին: Թեթև արդյունաբերության զգալի աճումը և պարենային հումքի մթերումը պայմաններ են ստեղծում բանվոր աղգարնակության մատակարարման բարելավման համար, ինչպես նաև անհրաժեշտ են դարձնում խորհրդային առևտրի ծավալման մասին ԿԿ-ի հոկտեմբերյան պլենումի վորոշումներն անվերապահորեն ու ժամանակին կատարելը:

Ապրանքաշրջանառությունը 1932 թ. հասնելու յե 35 միլիարդ ռուբլու, այսինքն՝ 30 տոկոսով ավելի,



քան 1931 թ.։ Դրա համար անհրաժեշտ է մեծացնել ապրանքափոխադրման ցանցը և բաց անել մեծ քանակությամբ նոր խանութներ, ըստ վորում Յենտրոսոյուզի և Մատոդկոմատի գծով բացվելու յե 10.000 խանութ այնպիսի հաշվով, վոր Մատոդկոմատի 5000 խանութները սպասարկեն բոլոր չըջանային կենտրոններին և դավառական արդյունաբերական կետերին։ Մատոդկոմատից և սպառողական կոոպերացիայից բացի, մեծ քանակությամբ խանութներ են բաց անելու խորհանտեսությունները, կոլտնտեսությունները, Հողփողկոմատի սխտեմը. նոր խանութներ են բացվելու նաև արդյունաբերության կողմից։

Առևտրի այս ծավալումը, ապրանքաչըջանառության այս 30%-ով աճումը 1931 թ. համեմատությամբ, խորհրդային կոոպերացիայի աշխատանքը դարձնում են վողջ ժողովրդական պլանի չափադանց կարևոր մի ողակը։

Մեծ նշանակություն ունի հանրային սննդի ընդարձակումը, վոր նախադժիած է պլանում։ Հանրային սննդի ցանցում բաց թողնվելիք ճաշերի թիվը հասնում է 50 միլիոնի, այսինքն՝ 50 %-ով ավելի, քան անցյալ տարի։

Յես արդեն ասացի այն մասին, վոր պլանում նախատեսված է վիթխարի բնակարանային շինարարություն։ Այդ նույնպես ընթանում է բանվոր դասակարգի և աշխատավորության շահերի լավագույն սպասարկման գծով։

Այսպիսով, 1932 թ. պլանը, վորը օտցիարիստական շինարարության հետագա հաղթանակների պլան է հանդիսանում, միաժամանակ հանդիսանում է բանվոր դասակարգի բարեկեցության հետագա բարձրացման պլանը։

Ժողովրդական տնտեսության անընդատ աճման հետևանքով բանվոր դասակարգի ընդհանուր թիվը 1932 թ. ավելանում է 2.4 միլիոնով—18.6 միլիոնից 21 միլ.։ Աշխատավարձի և բանվոր դասակարգի թվի

աճման նշված տեմպերին համապատասխան, պետք է աճի նաև աշխատավարձի ֆոնդը։ 1931 թ. աշխատավարձի ֆոնդը 21.1 միլիարդ ռուբլի յեր, 1932 թ. աշխատավարձի ֆոնդը կհասնի տարեկան 26.8 միլիարդի։ Աշխատավարձի ֆոնդի այդպիսի աճումը կնշանակի բանվոր դասակարգի մասի հետագա աճումը ազգաբնակչության յեկամուսների մեջ։ Աշխատանքի բնադավառում 1932 թ. կարևորագույն խնդիր է հանդիսանում աշխատավարձի հետագա վերականգնումը և աշխատանքի կազմակերպման հարցերը։ Աշխատանքի արտադրողականությունը 1932 թ. համար տուաշտըված է շատ մեծ չափով։ Յենթադրվում է, վոր աշխատանքի արտադրողականությունը կաճի 22 տոկոսով։ Միայն այս պայմանով կարելի յե արտագրել այն հսկայական քանակությամբ արտադրանքը, վորը նախադժիած է 1932 թ. պլանում։

Աշխատանքի արտադրողականության աճման վրա ազդելու յե աշխատանքի պայմանների զգալի բարելավումը։ Նրանց շարքը պետք է դասել 7-ժամյա բանվորական օրվա կիրառման ավարտումը 1932 թ. վողջ արդյունաբերության մեջ։ 1932 թվականը նախատեսում է աշխատանքի պայմանների ստողջացման կուպիտալ ներդրումների վիթխարի աճում։ Այսպես, որինակ, հենց միայն ԺՏԳՈ-ի արդյունաբերության գծով աշխատանքի պաշտպանությանը հատկացվելու յե 111 միլ. ռ. այսինքն՝ 80%-ով ավելի, քան 1931 թ. փաստական հատկացումները։ Բնակարանային շինարարության մասին յես արդեն խոսեցի։ Այս աճեննիր արդեցությունն է ունենալու աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա։

1932 թվին միջին աշխատավարձը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում հնգամյակի նյումները զերագանցելու յե 20.7%-ով։ Աշխատավարձի ամբողջ ֆոնդը, չնորհիվ այն բանի, վոր բանվորների թիվը ևս զգալիորեն ավելի շատ է, քան նախատեսու-



վում եր հնդամյա պլանով, 60 տոկոսով ավելի կլինի քան այն, ինչ նշված եր հնդամյա պլանում:

Սոցիալական ապահովության ֆոնդը հնգամյակի նշումները կգերազանցի 69%-ով: Աշխատանքի պաշտպանության կապիտալ ներդրումները դրեթեյերկու անգամով կգերազանցեն այն մակարդակը, ինչ նշված եր հնդամյակի վերջին տարվա համար: Ձի կարելի մուսնալ, վոր բանվորի կենսական մակարդակի բարձրացումը մեղ մոտ ամենևին չի սղառվում այն անհատական աշխատավարձի բարձրացումով, վոր անմիջապես ստանում ե բանվորը: Նոմինալ աշխատավարձից շատ ավելի մեծ չափով աճում են բանվորական ուժի վերաբաշխումը հանրայնացված ֆոնդերը, այսպես կոչված սոցիալականացված աշխատավարձը:

Բանվորների բարեկեցության բարձրացման գործում խոշոր նշանակություն ունեցավ գործադրկության վերացումը և մեկ ընտանիքից աշխատողների թվի ավելացումը: Այդ միանգամայն փոխում ե բանվոր դասակարգի բարեկեցության պատկերը:

Աշխատանքի արտադրողականության պլանի կատարման վրա խոշոր ազդեցություն կունենա սոցմրցման և հարվածայնության անընդհատ վերելքը: Հենց այդ պայմաններում միայն, աշխատանքի այդ նոր ձևերի հետագա ամենալայն ծավալման պայմաններում, մենք կկարողանանք կատարել այն մեծ առաջադրությունը, վորը նշված ե 1932 թ. պլանում աշխատանքի արտադրողականության բարձրացման առաքարի դում: Հարվածայնության և սոցմրցման աճումը շարունակվում ե: Հատկապես այս տեսակետից արժեքավոր ե այն, վոր սոցմրցման ղեկի քանակական աճման հետ միասին, մենք նկատում ենք այդ շարժման անընդհատ աճում և ավելի բարձր աստիճանի փոխանցում: Լայն տարածում են ունեցել վորակի բրդաղները, ռացիոնալիզատորական բրդաղները: Դժվար կլինի ասել այնպիսի մի ձեռնարկություն,

վորտեղ ներկայումս գործադրվելիս չլինի հանդիպական պլանավորումը, արտադրանքի հանդիպական նորմաների մշակումը և այլն: Վերջապես, վերջին ամիսներս աճում են տնտեսաշարժային բրդաղները, վորոնք ամենից ավելի լիակատար ձևով արտահայտում են բանվորների հոգածու վերաբերմունքը վոր միայն քանակական, այլև վորակական ցուցանիշների բարձրացման նկատմամբ:

## Դադրեր

Մի քանի խոսք կադրերի մասին: 1932 թ. պլանին իր մեջ ունի խոշոր ծրագիր կադրերի վերաբերյալ, ժողովրդական տնտեսությունը վորակյալ կադրերով, ինժեներներով և տեխնիկներով ապահովելը մեծական պայմաններից մեկն ե այն պայքարի, վորը մենք մղում ենք սոցիալիզմի հաղթանակի համար:

1931 թ. վերջին ժողովրդական տնտեսությունն ունի արդեն մասնադիտական կրթություն ուսացած 226.000 ինժեներ ու տեխնիկ: Յեթե վերցնելու լինենք ժողովրդական տնտեսության այն բոլոր մասնագետներին, վորոնք միավորված են ՃՏՍ-ներում, ներառյալ նաև պրակտիկներին, ապա մենք այդպիսին ունենք այսօր 600.000 հոգի, նախանցյալ տարվա 300.000-ի դիմաց: 2 տարվա ընթացքում ինժեներների և պրակտիկների թիվը կրկնապատկվել ե:

Ինքն ըստ ինքյան հասկանալի չե, վոր այս թվերը և աճման այս արագ տեմպը չեն կարող դեռևս մեղ բավարարել, ինչքանով վոր ժողովրդական տնտեսությունը զարգանում ե մեծ արագությամբ: 1932 թվին մենք չարունակում ենք ծավալել կադրերի արագատեմպ պատրաստումը: Այսպես, որինակ, 1932 թ. Նշվում ե ԲՈՒՀ-երն ընդունել 257.600 հոգի, վորը կադմուս ե 1931 թ. ընդունելության 139%-ը, տեխնիկումներում՝ 591.000 հ. կամ 155%, բանֆակները՝ 335.700 հ. կամ 196%, ֆարգործուները՝ 1.036 հա-



դար 4. կամ 144% : Ավելանում է նաև շրջանավարտների թիվը :

Տեխնիկոմները բաց են թողնում 175.000 տեխնիկ— $2\frac{1}{2}$  անգամ ավելի, քան 1931 թ., բանֆակները՝ 121.000 4. կամ անցյալ տարվանից 80%-ով ավելի, ֆարգործուները՝ 364.000 յերևտասարդ վորակյալ բանվորները, վորը ավելի քան չորս անգամով գերազանցում է 1931 թ. շրջանավարտների թիվը :

Սրա հետևանքով 1932 թ. վերջին բոլոր ԲՈՒՀ-երի, տեխնիկոմների, բանֆակների և ֆարգործուների ուսանողների թիվը կհասնի 4 միլիոնի, 1931 թ.  $2.7$  միլիոնի դիմաց : Մոտ 4 միլիոն հոգի սովորելու են, վորպեսզի դառնան վորակյալ աշխատողներ մեր ժողովրդական տնտեսության, մեր սոցիալիստական ֆրոնտի համար :

Ամենանշանակալից պրոցեսներից մեկը, վոր նկատելի չե մեզ մոտ այժմ, հանդիսանում է այն, վոր սոցիալիստական արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության աշխատողները, կատարելով իրենց անմիջական արտադրական առաջադրությունները, միաժամանակ յուրացնում են արտադրական պրոցեսի դիտական-տեխնիկական և տեսական կողմերը : Ստեղծվում է աշխատողների նոր տիպ, վորոնք իրենց մեջ միացնում են և՛ անմիջական պրակտիկին, և՛ վորոշ չափով տեխնիկին ու անգամ ինժեներին :

Կապիտալիզմը դիտությունն անջատեց անմիջական արտադրողներից—դրանումն եր կայանում, Մարքսի խոսքերով, կապիտալիստական արտադրության որինչափություններից մեկը : Սոցիալիզմը ոտնդնում է մարդկանց նոր տիպ—դրանումն է մեր յերկրի պատմական զարգացման ընթացիկ շրջանի մեծագույն նշանակություններից մեկը :

Ցածր կրթության ասպարիզում ևս խոշոր ծրագիր է նախադրված : Լուսժողովմատի դպրոցներում ուղղորելու յե ընդամենը  $24.7$  միլիոն յերեխա :

## Վորակակամ ցուցանիշներ

Վորպես յեղրակացություն, յես կկամենայի խոսել վորակական ցուցանիշներն անպայման կատարելությամբ : Ահա մի քանի հաշվարկումներ, վորոնք ցույց կտան վորակական ցուցանիշների նշանակությունը պլանի կատարման գործում :

Ինքնարժեքի բարձրացման հետևանքով առաջացած կորուստները ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերում 1931 թ. հաշվվում են մոտավորապես մեկ ու կես միլիարդ ո., 1930 թ. համեմատությամբ : Իսկ ինքնարժեքի իջեցման պլանի համեմատությամբ այդ կորուստները կազմում են 1931 թ. ավելի քան  $41\frac{1}{2}$  միլիարդ ո. :

Հենց միայն ԺՏԳՈ-ի արդյունաբերության դժով, վորին առաջադրություն է տրված ինքնարժեքն իջեցնել 10 %-ով, իսկ 1931 թվականն ավարտում է ինքնարժեքի 2% բարձրացումով, կորուստների ֆինանսական արտահայտությունը կազմում է 1.800 միլ. ո. :

Տրանսպորտը, վորը պետք է փոխադրումների դժով ինքնարժեքն իջեցներ 20 %-ով, իջեցրեց միայն 2 %-ով, վորը ժողովրդական տնտեսությանը մոտ 500 միլ. ո. վնաս հասցրեց : Մատժողկոմատի արդյունաբերությունը փոխանակ ինքնարժեքը 11 %-ով իջեցնելու,  $11\frac{1}{2}$  տոկոսով իջեցրեր միայն, և դրանից ստացված վնասը հասնում է 400 միլ. ուրբու և այլն :

Ժողովրդական տնտեսությունը հարյուրավոր միլիոններ ու միլիարդներ է կորցնում շնորհիվ ինքնարժեքի իջեցման խնդիրների հանդեպ ցուցաբերվող անուշադրության : Այն, ինչ մենք նշում ենք 1932 թվի համար—ինքնարժեքի 7 % իջեցում—ժողովրդական տնտեսության համար պետք է տնտեսի 5 միլիարդ ո., յեթե վերցնենք միայն ԺՏԳՈ-ի և Մատժողկոմատի արդյունաբերությունը : Այնուհետև, մինք պարտավոր ենք այս տարի, որինակ, վճռական բեկում տակդեկ վատեղությունի, մետաղի, շինանյութի և այլ նյութ-



թերի ոգտագործման խնդրում: Մենք անխնա յենք մտխում վառելանյութն ու մետաղը, վորոնց առանց այդ ել մեծ դիֆիցիտ ունենք: Պլանը յենթադրում է, վոր մենք պետք է առնվազն 10 %-ով կրճատենք վառելանյութի ու մետաղի ծախսումը, առնվազն 15 %-ով՝ արտադրութեան մեջ, առնվազն 20 %-ով՝ շինարարութեան մեջ:


Միանդամայն ակնհայտ է, վոր այդ հարցին ուշադիր մոտենում ունենալիս, այդ խնդրի վրա մեր ուշադրութեանը մոբիլիզացիայի յենթարկելիս, մենք կկարողանանք տնտեսել մետաղը, շինանյութը և արդյունաբերական հումքը, դրա շուրջը մոբիլիզացիայի յենթարկելով պրոլետարիատի լայն մասսաներին, մեր ինստիտուտների աշխատանքը, առհասարակ տեխնիկական մտքի աշխատանքը. այդ բոլորը կարող են ապահովել վորակական ցուցանիշների այս դժվարին, այս լարված խնդրի կատարումը:

Վերջապես, արտադրամիջի վորակը, դա նույնպես ժողովրդական տնտեսութեան վատնում է:

\*\*\*

Ընկերներ, 1932 թ. պլանը վիթխարի յե: 1932 թ. մենք պետք է ավարտենք հնգամյա պլանը և այդպիսով կատարենք կուսակցութեան կարևորագույն լոզունգը: Այստեղից պարզ է այդ պլանի լիակատար իրագործման համաշխարհային պատմական նշանակութեանը:

1932 թ. պլանի կատարումը մեր յերկրի բանվոր դասակարգի և կոլտնտեսականների պատվի դործն է հանդիսանում, վորովհետև մեր յերկրի բանվոր դասակարգը ամբողջ աշխարհի առաջ, համաշխարհային պրոլետարիատի առաջ պարտավորութեան և վերցրել այնպիսի տեմպերով սոցիալիզմ կառուցել մեր յերկրում, վորպեսզի հնարավոր լինի 4 տարում կտրել անցնել այն տարածութեանը, վորը նախատեսվում էր 5 տարվա համար:





2290

ՀՀ Ազգային գրադարան



NL0210495



32.003

ԳԻՆԸ 30 ԿՈՊ. (1<sup>3</sup>/<sub>4</sub> ժ.)



В: КУЙБЫШЕВ

НА ПОРОГЕ ЧЕТВЕРТОГО ГОДА ПЯТИЛЕТКИ

Госиздат ССР Армении  
Эриawanь—1932